

# ՏԵՂԵԿԱՏՈՒԻ


ԴԵԳԻԵԳԱԾԸ

ديقچادو

Հրատարակությունը հանդիս է Հ.Բ.Բ.Մ.Ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة

24 ԱՊՐԻԼ  
2013



ՅԱԿՈՔ  
ՅԱԿՈՔԵԱՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

<b>ԽՍՐԱԳԻՐ</b> Շաքէ Մարգարեան	<b>Լուսանկարի Մը Պատմութիւնը</b> 1 <i>Գայիանէ Պողոսեան</i> <i>Արեւմտահայերէնի վերածեց՝ Շ. Մ.</i>
<b>ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ</b> <b>ԽՈՐՀՐԴԱՏՈՒ</b> Պերճ Թերզեան	<b>Մոմեր Վառեցէ՛ք Ապրիլ 24-ին</b> 4 <i>Շաքէ Մարգարեան</i>
<b>ՍՐԲԱԳՐԻՉ</b> <b>ՎԵՐՍՏՈՒԳԻՉ</b> Անայիս Ճիգմեճեան	<b>Հայոց Ցեղասպանութեան Նուիրուած Միջոցառում Ռոթարիի</b> 5 <b>«Շամբոլիոն» Ակումբին Կազմակերպութեամբ</b>
<b>ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ</b> <b>ՁԵՒԱՌՐՈՒՄ</b> Շահէ Լուսարարեան	<b>Յուշերու Պատահիկներ Յակոբ Յակոբեանէն</b> 6
<b>ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ</b> <b>ՇԱՐՈՒՎՃԸ</b> Շաքէ Մարգարեան Վարդուհի Արթինեան	<b>Վերջին Ուխտագնացութիւնը.</b> 8 <b>Ի Յուշ Նկարիչ Յակոբ Յակոբեանի</b> <i>Երուանդ Ազատեան</i>
<b>ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ</b> Nubar Printing Press	<b>Տոքթ. Սուրեն Պայրամեանի «Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ-1888-2011</b> 12 <b>Մատենագիտական Ցուցակ» Հատորը</b> <i>(Անգլերէն եւ Արաբերէն)</i>
<b>Թիւ 67 Նոր Շրջան</b> <b>ԱՊՐԻԼ 2013</b>	<b>Հայաստան Եւ Զաղաքակրթութիւններու երկխօսութիւն-</b> 13 <b>500 Տարի Տպագրական Նուիրաբերում</b>
	<b>Երբ Յաղթանակը Կը Գտնէ Արժանաւորները</b> 14 <i>Միհրան Ղազէլեան</i>
	<b>Արամ Խաչատրեանի Ծննդեան 110-ամեակին Նուիրուած Համերգ</b> 17 <i>Հրանդ Զէշիշեան</i>
	<b>«Չանգեզուր» Պարախումբին Ելոյթը</b> 19 <i>Շաքէ Մարգարեան</i>
	<b>Գահիրեի ՀԲԸՄ-ի Տարեկան Ընդհանուր Ժողովը</b> 22 <i>Գահիրեի ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան</i>
	<b>ՀԲԸՄ-ի Նոր Մասնաճիւղ Ուրբանիոյ Մէջ</b> 23 <b>Յ. Ծուլիկեան</b> <i>Արեւմտահայերէնի վերածեց՝ Շ. Մ.</i>
	<b>Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԷՆ Ներս Տոքթ. Անի Օհանեսեանի</b> 24 <b>Դասախօսութիւնը</b> <i>Սօսի Ներտետեան-Յակոբեան</i>
	<b>Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 13 Տարեկանէն Վար Տղոց Ֆուրբոլի</b> 25 <b>Խումբը Կը Մասնակցի «PAOK»-ի Կազմակերպած Մրցաշարքին</b> <i>Գահիրեի ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան</i>
	<b>Մայր Նապիլ Ախոյեան՝ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 2013-ի</b> 26 <b>Գնդամուղի Մրցաշարքին</b> <i>Գահիրեի ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան</i>
	<b>T-TAPP Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԷՆ Ներս</b> 27 <i>Սօսի Ներտետեան-Յակոբեան</i>
	<b>Ոչ Եւ Է Արսէն Էմիրզեան</b> 28 <i>«Տ»</i>



# ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՄԵ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

*Ստորել կը ներկայացնենք թղթակցուհի Գայիանե Պողոսեանի հետաքրքրական յօդուածը, որ հրատարակուած է «Հայ Չինուոր» պարբերաթերթին մէջ եւ որը անգամ մըն ալ կը բացայայտէ հայ ազատամարտիկներուն ազնուութիւնն ու մարդկային դիրքորոշումը, եւ ատրպէյճանցի զինուորներուն վախկոտութիւնն ու զեղծարարութիւնը:*

Համացանցին մէջ ուշադրութիւնս գրաւեց լուսանկար մը. տարեց կին մը գորովագին գրկած է զինուորական հագուստով երիտասարդ տղամարդ մը: Լուսանկարը մակագրուած է.



«Ատրպէյճանցի մեծ մայրիկը եւ հայ ազատամարտիկը»: Ես «Դիմատետր» (Facebook) ցանցով լուսանկարը սփռեցի եւ խնդրեցի անոր մէջ պատկերուած անձերու մասին տեղեկութիւն հաղորդել:

Շուտով գրութիւն մը ստացայ Իսթանպուլի համալսարանի պատուելի դասախօս, հայագի Ալպեր Բեշիշէն: Ան կը գրէր որ ազատամարտիկը իր դասընկեր Սարգիս Հացպանեանն է՝ Արցախեան պատերազմի մասնակից: Եւ ահա Սարգիս Հացպանեանը իմ աշխատասենեակս է եւ կը պատմէ յայտնի լուսանկարին հետաքրքրական ու սրտառուչ պատմութիւնը:

-Ե՞րբ ստեղծուած է այս լուսանկարը, ի՞նչ պայմաններու մէջ...

-Լուսանկարի պատմութեան աւելի ուշ կ'անդրադառնամ, փոքրիկ նախապատմութենէ մը յետոյ:

1993 Ապրիլն էր, Զարվաճառի ազատագրութեան օրերուն: Զարվաճառի մէջ հարիւրաւոր խաղաղ բնակիչներ կային՝ գլխաւորաբար ծերեր, երեխաներ եւ կիներ: Այրմարդիկ, զինուորականները եւ ռազմիկները փախեր էին՝ անգէն մարդիկը անօգնական ձգելով: Մենք դրան շեմին նստած կիներու խումբին մօտեցանք, եւ ես թրքերէնով ողջունեցի զիրենք: 80-ը անցած ծեր կին մը յանդիմանանքով նայեցաւ ու ըսաւ. «Ինչո՞ւ այս-

քան ուշացաք: Հայերը շուտով քաղաք կը մտնեն: Մերիկները ըսին՝ մենք կ'երթանք որ ձեզի համար ուղղաթիւներ դրկենք: Իրենք թռան եւ մեզ հոս ձգեցին... այրմարդիկ փախան, կիները ձգելով»:

Ես ամէն ինչ հասկցայ: Ատրպէյ-

ճանուհին մեզ իւրային կարծած էր:

-Հայերը արդէն եկած են, - ըսի ես: Ռազմագերիներու պատասխանատուն ես էի: Բոլոր զինուորները խիստ հրահանգուած էին յարգալից ըլլալ խաղաղ բնակչութեան հանդէպ: Մենք մարդիկը հաւաքեցինք, Զարվաճառի երկու շէնքերուն մէջ տեղաւորուեցանք, անձամբ գրուցեցի անոնց հետ եւ բացատրեցի որ իրենց կեանքն ու պատիւը հոս պաշտպանուած է, քանի որ մե՛ր կռիւը մեր դէմ զէնք հանած թշնամիին հետ է եւ ո՛չ թէ խաղաղ բնակչութեան: Որ, ի տարբերութիւն ատրպէյճանցի ռազմիկի ու զինուորականի, մենք զէնք չենք վերցներ անգէն մարդուն վրայ, չենք խոշտանգեր զանոնք եւ մարդկային արժանապատուութիւնը չենք վիրաւորեր: Եւ որ իրենք որոշ ժամանակ վերջ անվնաս պիտի ճամբուին մօտակայ քաղաքը՝ Գանձակ (Կիրովապատ):

-Անոնք հաւատացի՞ն...ինչպէ՞ս կրնային հաւատալ հայերու խոստումներուն, եթէ իւրայինները չէին կատարած իրենց խոստումը, փախած էին առանց ետ նայելու՝ իրենց ծնողները, կիները եւ երեխաները ճակատագրի քմահաճոյքին ձգելով:

-Սկիզբը անշո՛ւշտ չհաւատացին. շա՛տ վախցած էին: Մենք մօտակայ գիւղերը գացինք եւ բոլորը Զարվաճառ բերինք: Գիւղե-



րեն մեկուն մէջ զարհուրելի տեսարանի մը հանդիպեցանք: Վիրաւոր կին մը իր մահամերձ աղջիկը կը խնամէր: Աղջիկը գրեթէ արհունաքամ եղած էր: Անկեղծ ըսելով՝ սկիզբը կարծեցի թէ մերիկները վիրաւորած են զիրենք: Շատ բարկացայ, բայց քիչ վերջ կիւնը զայրոյթս փարատեց. պարզուեցաւ որ այդ կնոջ ամուսինը գնդակահարեր էր կինն ու դուստրը, որպէսզի «հայերուն ձեռքը չիյնային», իսկ ինք փախեր էր:

Մենք անմիջապէս ուղղաթիռ մը խնդրեցինք եւ զիրենք Վարդէնիս փոխադրեցինք: Մեր բժիշկները փրկեցին երկուքն ալ. աղջիկը շատ ծանր վիրահատութեան մը ենթարկուեցաւ... Եւ այս ամէնը ռազմագերիներու աչքերուն առջեւ տեղի ունեցաւ: Անոնք ապշած էին...

Անոնց մէջ կին մը կար, որ միւսներէն տարբեր էր. 81-ամեայ Շէյխա խանումը: Բոլորը մասնաւոր պատկառանք մը ունէին անոր հանդէպ: Շէյխա խանումը բանաստեղծ էր, աշուղ եւ բանասաց: Անկա բնատուր փիլիսոփայ մըն էր, սրամիտ եւ ճարտար լեզու ուներ: Ես կը սիրէի իր հետ զրուցել: Ան կ'ըսէր. «Ան կռիւը մեր երկու ժողովուրդներուն կռիւը չէ՛, մենք հայերը կը սիրենք, բոլորս ալ գիտենք որ ասիկա հայերո՛ւ երկիրն է, ամենուրեք հայկական գերեզմաններ են, խաչերով զարդարուած քարեր ու հայկական մշակոյթի հետքեր»:

-Չի՞ բացառուիր որ ան կը շողոքորթեր....վախէն...

-Սկիզբը՝ թերեւս, բայց յետոյ՝ ո՛չ: Որովհետեւ մենք իրապէ՛ս շատ վեհանձնաբար վերաբերուեցանք իրենց: Սնունդը քիչ էր, բաւարար չէր: Մենք օրը մէկ անգամ կ'ուտէինք, բայց ռազմագերիները ալիւրով եւ սննդամթերքով կ'ապահովէինք: Անոնք հաց կը թխէին, ճաշ կ'եփէին եւ մեզի կը հրամցունէին... Այդ նոյն ժամանակ ատրպէյճանցիները աշխարհով մէկ կը տարածայնէին թէ հայերը սոսկալի սպանդ կազմակերպած են Զարվաճառին մէջ, կը մորթեն ու կը խոշտանգեն խաղաղ բնակչութիւնը:

Եւ ահա Ֆրանսայէն լրագրողներ եկան Զարվաճառ: Երկուքը հայ էին՝ լուսանկարիչներ Չաւէն Խաչիկեան եւ երջանկայիշատակ Ռուբէն Մանգասարեան... Անոնք բազմաթիւ լուսանկարներ ըրին, զրուցեցին ատրպէյճանցիներու հետ եւ տեսագրեցին. խօսեցաւ

նաեւ Շէյխա խանումը: Ան ըսաւ որ հայերը հոս իւրայիններէ աւելի ջերմ են, որ իր տղաքը փախան՝ իրենց մայրը անպաշտպան ձգելով, իսկ ահա այս հայ տղաքը որքան հոգատար էին իր եւ միւսներուն հանդէպ:

-Կ'ուզէի այսպիսի՝ տղաք ունենալ,- ըսաւ Շէյխա խանումը՝ մատնացոյց ընելով մեզ եւ առաջին անգամ բերնէն թոցուց որ որդին Զարվաճառի ոստիկանապետն է, բայց փախաւ՝ ձգելով մայրը: Եւ ահա Չաւէն Խաչիկեանը այդ գրոյցի ընթացքին աննկատ նկարած է մեզ...

-Դուք այդ ժամանակ քանի՞ տարեկան էիք:

-Երեսուն: Եւ ահա Ֆրանսայի «Liberation» թերթը այս լուսանկարը հրատարակեց եւ գրեց որ ատրպէյճանցի կինը Ֆրանսայէն եկած կամաւորը աւելի կը սիրէ, քան իր որդին: Նաեւ յօդուածով մը հրատարակուեցաւ ատրպէյճանցի ռազմագերիներուն խօսքը՝ հայերուն բարեացակամ ու մարդկային վերաբերմունքին մասին: Օր մը վերջ՝ յօդուած մը տպագրեց նաեւ թրքական «Milliyet» թերթը, գրելով թէ տասնեակ հազարաւոր խաղաղ բնակիչներ սպանդի կ'ենթարկուէին Զարվաճառին մէջ: Հոն գետեղուած էր նաեւ նոյն այդ լուսանկարը, հետեւեալ մակագրութեամբ. «Ատրպէյճանցի մեծ մայրիկը կը գրկէ ու կը համբուրէ իր թոռնիկը (զիս), եւ կ'ըսէ՝ գնա՛ քու մորթուած ու անարգուած հարազատներուդ վրէժը առ հայերէն»:

Ընկերներես մին, Փարիզի մէջ «Milliyet»-ի առաջին էջին վրայ գետեղուած իմ մեծադիր պատկերը տեսնելով, գնեց թերթը եւ զարմանքով կարդաց որ իր ընկեր Սարգիս Հացպանեանը թուրքերը ներկայացուցած են որպէս ատրպէյճանցի մը... Այդ նոյն ժամանակ, պատահականօրէն, ան գնեց նաեւ «Liberation» թերթը եւ լուսանկարին իրական պատմութեան տեղեկացաւ: Ապա ան, այս երկու թերթերը Եւրոխորհուրդ դրկեց, որպէս թուրքերու ստախօսութեան ու զրպարտանքի ցայտուն ապացոյց:

-Ի՞նչ եղան Զարվաճառի ռազմագերիները:

-Մօտաւորապէս քսան օր մենք միասին ապրեցանք: Կիրովապատ ճամբելէ առաջ, իրենց յորդորեցինք տուներնին երթալ եւ պահած թանկարժէք իրերը առնել, հաւաստիացնելով որ մենք ոչ մէկ բան կ'առնենք իրենցմէ: Մենք՝ հայերս, ճակատագիրի բե-



րումով, յաճախ ստիպուած եղած ենք ձգել մեր հարստութիւնն ու հեռանալ մեր տուներէն, մեր արիւնին մէջ մենք ունինք այդ ցաւը եւ պիտի չնմանինք թուրքերուն: Անհեթեթութեան հասնող տեսարան մըն էր. մեզմէ բաժնուելու ժամանակ ատրպէյճանցիները կը փաթթուէին մեզ ու կու լային... Չիրենք անվնաս ու ապահով ճամբեցինք Կիրովապատ:

...Յետոյ տեղեկացանք որ երբ արտասահմանէն լրագրողներ եկած են Կիրովապատ՝ գիտնալու համար թէ հայերը ինչպէ՞ս վերաբերած են իրենց, չնայած բոլոր զգուշացումներուն եւ սպառնալիքներուն, Շէյխախանումը ճշմարտութիւնը պատմած է: Ան ըսած է թէ Քարվաճառի մէջ հայերը իրենց աւելի լաւ կը վերաբերէին, քան ատրպէյճանցիները Կիրովապատի մէջ:

Տարիներ ետք, երբ պատերազմը արդէն վերջացած էր, այս նոյն նկարը մեր օդակայանը տեսայ, ահռելի մեծութիւն ունեցող պաստառի մը վրայ... Յետաքրքրուեցայ եւ իմացայ որ Միջազգային Կարմիր Խաչը մարդասիրութիւն խորհրդանշող տարուան լաւագոյն լուսանկարը ընտրած է ատիկա եւ միլիոնաւոր տպաքանակով տարածած է զայն բոլոր այն երկիրները, ուր Միջազգային Կարմիր Խաչը ներկայացուած է:

-Նաեւ փաստագրական շարժանկար մը նկարահանուած է այս լուսանկարին առընչութեամբ:

-Այո՛, վաւերագրող Ֆրետերիկ Թոնոլլին շարժանկար մը պատրաստեց: Ան Հայաստան եկաւ, զիս գտաւ, յետոյ Ատրպէյճան գնաց... Անոր շարժանկարը բազմաթիւ մրցանակներու արժանացաւ: Ֆրետերիկ Թոնոլլին մօր կողմէ հայ է, բայց սկիզբը ոչ իսկ բառ մը կը խօսեր հայերէն: Յետոյ այնքան կապուեցաւ Հայաստանին, որ վերջին այցելութեան ժամանակ հայերէն կը խօսեր եւ կ'ըսէր որ ինք եութեամբ հայ է. որ Հայաստանի եւ հայերու հետ շփուելով հասկցած է որ իր արեան ու կենին մէջ հայկականութիւնը կը գերիշխէ: Յետագային Թոնոլլին Հայաստանի եւ Արցախի մասին ուրիշ շարժանկարներ ալ հանեց. մէկ խօսքով՝ ան դարձաւ Հայաստանի նուիրեալ եւ Հայաստանի մասին աշխարհին պատմելը իր առաքելութիւնը դարձուց:

«Շարմ» ընկերութիւնն ալ նկարահանած է վաւերագրական շարժանկար մը, ուր այս

լուսանկարին պատմութիւնը ներկայացուած է ամբողջութեամբ:

Շարժանկար նկարահանած է նաեւ «Ինթերնիւզ»-ը. Գարեգին Խումարեանը եւ վրացուի մը համատեղ նկարահանեցին «Մօր Ձեռքերը» վերնագիրով շարժանկարը, որ դարձեալ մրցանակներու արժանացաւ:

-Ի՞նչ շեշտադրում ունի շարժանկարը...

-Մայրը, ի՞նչ ազգէ ալ ըլլայ, մայր կը մնայ, եւ կրնայ իրեն որդիաբար վերաբերող տղու մը հանդէպ մայրական զգացում տածել: Ա՛յն ձեռքերը, որ պատերազմի ժամանակ հակառակորդի գինուորին փարած էին, մօ՛ր ձեռքեր էին՝ մայրական ջերմութեամբ, քնքշանքով ու սիրով լի:

Օր մը, չորրորդ դասարան սորվող աղջիկս տուն եկաւ ու ըսաւ որ իրենց գրականութեան դասագիրքին մէջ Պարոյր Սեւակի «Մօր Ձեռքերը» բանաստեղծութեան քով գետեղուած է իմ եւ ատրպէյճանցի մեծ մայրիկին լուսանկարը: Լուսանկարը տեսնելով՝ աղջիկս ուսուցչուհիին ըսած է որ նկարին մէջ իր հայրն է, սակայն ուսուցչուհին չէ հաւատացած: Յաջորդ օրը աղջիկս այդ նկարին բնօրինակը դպրոց տարաւ: Դպրոցին տնօրէնը հրաւիրեց զիս եւ հանդիպում մը կազմակերպեցին դպրոցականներուն հետ:

Վրացուիին շարժանկարը Պարոյր Սեւակի «Մօր Ձեռքերը» բանաստեղծութեան ընթերցանութեամբ կ'աւարտուի: Իմ Մարիամս՝ աղջիկս կը կարդայ:

*Յ. Գ. - Սարգիս Հացպանեանը ծնած է Կիլիկիոյ Ալեքսանտրէթ քաղաքը: Յետոյ ընտանիքը Ֆրանսա տեղափոխուած է: Ան Ֆրանսայի ազգային հերոս Միսաք Մանուշեանին քրոջ՝ Հռիփսիմէին թոռն է: Մասնագիտութեամբ շարժանկարիչ է: 1990-ին Փարաճանովի հրաւերով Հայաստան այցելած է: Յետոյ անդամագրուած է Լենինոյ Ազգայնականի հիմնադրած «Ազատագրական Բանակ»-ին եւ մասնակցած՝ Արցախի ինքնապաշտպանութեանը եւ ազատագրութեանը:*

*Ան ամուսնացած է, երկու երեխայ ունի: Հացպանեաններու ընտանիքը ներկայիս Հայաստան կը բնակի:*

*Արեւմտահայերէնի Վերածեց՝ Շ. Մ.*



## ՄՈՄԵՐ ՎԱՌ-ԵՑԷ՛Ք ԱՊՐԻԼ 24-ԻՆ

Ամեն տարի Ապրիլ 24-ին վառուող մոմեր գետեղեցե՛ք ձեր պատուհաններուն առջե՛ւ՝ իբրև հայոց ճիչ եւ ըմբոստացում, ինչպես այդ կ'ընեն աշխարհի տարբեր ծագերուն մէջ իրենց արմատներէն չհեռացած, հայութեան պահանջատիրութեան իրենց ձայնը միացուցած, հայրենասեր ու քաջասիրտ հայ զաւակներն ու օտարներէն ոմանք:

Թո՛ղ այդ մոմերուն տաքութիւնը ջերմացնէ օտարացած հայերուն եւ օտարներուն պաղ սրտերը, իսկ լոյսը՝ լուսաւորէ խաւարի մէջ խարխափողներուն միտքերն ու առաջնորդէ զանոնք դէպի արդարութիւնն ու իրականութիւնը: Հաւանաբար օր մը «լուսաւորուին» նաեւ Երիտթիւրքերուն յամառ յետնորդներուն միտքերը:

Ամեն տարի այս օրը մենք մոմեր կը վառենք մեր եկեղեցիներէն ներս մատուցուող պատարագի ընթացքին, Աստուծոյ կ'աղօթենք եւ կը պահանջենք որ այլեւս որեւէ տեղ չկրկնուի նման սահմուկեցուցիչ ցեղասպանութիւն:

Այո՛, եթէ նախապէս միայն կ'ողբայինք, ապա այժմ՝ **ԿԸ ՊԱՅԱՆՁԵՆՔ**:

Այս տարի եւս Չորեքշաբթի, 24 Ապրիլի երեկոյեան ժամը 6-ին, Գահիրէի հայութիւնը միասնականօրէն հաւաքուեցաւ Ս.Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիէն ներս մատուցուող պատարագին ներկայ գտնուելու եւ իր նախնեաց յիշատակը յարգելու:

Ս. Պատարագին ներկայ էին Եգիպտոսի մօտ ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեան եւ Ազնուափայլ Տիկիւնը, դեսպանատան աշխատակիցներ, Գահիրէի Քաղաքական Ժողովի Ատենապետ Տիար Օսնիկ Պըլըքտանեան, Ազգային Իշխանութեան եւ միութիւններու ու կազմակերպութիւններու ղեկավարներ, Ազգային Վարժարանի ուսուցիչներ եւ աշակերտներ ու համայնքիս անդամներ:

Ս. Պատարագը մատուցեց Գերշ. Տ. Աշոտ Եպսկ. Մնացականեան՝ բարեխնամ առաջնորդ եգիպտահայ թեմի, իսկ պատարագին զուգորդուող շարականներն ու երգերը կատարեցին Եկեղեցւոյ «Ս. Ներսէս Շնորհալի» եւ Ազգային Առաջնորդարանի «Արաքս» երգչախումբերը՝ միասնաբար:

Պատարագի ընթացքին առաջնորդ

սրբազան հայրը, իր սրտաբուխ ուղերձ-պատգամէն վերջ, ընթերցեց Ամենայն Հայոց Գարեգին Բ. եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսներուն՝ «ԹՈՒՐԹԻԱՅԵՆ ԿԸ ՊԱՅԱՆՁԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՆԱԳՐԱԲՈՒՄԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՈՒՄԾՆԵՐԸ» վերնագրեալ միացեալ ուղերձը: Սոյն յայտարարութիւնով կաթողիկոսները թուրքիայէն կը պահանջեն.

**1. Հայոց Ցեղասպանութեան ճանաչում:**

**2. Ամբողջական հատուցում հայ ժողովուրդի կրած կորուստներուն եւ մարդկային ու ազգային բռնագրաւուած իրաւունքներուն:**

**3. Հայկական եկեղեցիներուն, վանքերուն ու եկեղեցապատկան կալուածներուն եւ հոգեւոր ու մշակութային արժէք ներկայացնող իրերուն անյապաղ վերադարձը հայ ժողովուրդին, որպէս անոնց իրաւատերը:**

Ապա անոնք՝ երախտագիտութեան եւ շնորհակալական խօսքեր ուղղելով բոլոր այն պետութիւններուն, որոնք Ցեղասպանութեան օրերուն օգնութեան ձեռք մեկնած են հայերուն, եւ որոնք դատապարտած ու պաշտօնապէս ճանչցած են Հայոց Ցեղասպանութիւնը, կը յայտարարեն թէ 100-ամեակին սեմին բոլոր կարելիութիւնները պիտի ներդնեն «...միասնաբար իրականացնելու հայ ժողովուրդին շահերը՝ յանուն արդարութեան եւ հայութեան իրաւունքներու պաշտպանութեան»:

Ս. Պատարագի ավարտին տեղի ունեցաւ յուշահանդէս՝ Ազգային Առաջնորդարանի «Արաքս» երգչախումբին կատարողութեամբ, ղեկավարութեամբ խմբավար Միհրան Ղազելեանի եւ նուագակցութեամբ երաժշտագետ Հայկ Աւագեանի: Յետոյ, մեր միլիոնաւոր նահատակներու հոգիներուն համար, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ, որմէ վերջ բոլոր ներկաները ուղղուեցան նախ դէպի նահատակաց խորան, ապա՝ եկեղեցւոյ շրջաբակին մէջ Մեծ Եղեռնի նահատակներու յիշատակին կանգնեցուած խաչքարին առջեւ խաչ-ծաղկեպսակներ գետեղեցին:

*Շաքէ Մարգարեան*





## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՌՈԹԱՐԻԻ «ՇԱՄԲՈՒԻՈՆ» ԱԿՈՒՄԲԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

22 Ապրիլին, Գահիրեի Ռոթարիի «Շամբուիոն» ակումբը Հայոց Ցեղասպանության 98-րդ տարելիցին նուիրուած միջոցառում մը կազմակերպեց, որուն որպէս գըլխաւոր բանախօս հրաւիրուած էր Եգիպտոսի մօտ ՀՀ դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեան:

Բացման խօսքով ելոյթ ունեցաւ ակումբին նախագահ Ժան Թերզեան՝ ներկաներուն բացատրելով օրուան խորհուրդն ու բուն նպատակը, որմէ ետք ցուցադրուեցաւ «Հայաստան...Քնացած Գեղեցկուհին» 50 վայրկեան տելուղութեամբ փաստագրական շարժանկարը:

Այա ակումբին յառաջիկայ նախագահ Փօլ Անթաքի ներկայացուց դեսպան Արմէն Մելքոնեանին կենսագրութիւնը եւ ելոյթ ունենալու հրաւիրեց զայն:

Դեսպանը խօսեցաւ Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումին, դատապարտումին եւ հետեւանքներու վերացումին անհրաժեշտութեան մասին: Ան

նաեւ անդրադարձաւ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգաւորումի գործընթացին, ներկաներուն ծանօթացուց Հայաստանի ընկերային-տնտեսական զարգացումին առաջնահերթութիւններուն եւ ժողովրդավարական բարեփոխումներու ընթացքին:

Ելոյթէն յետոյ դեսպանը պատասխանեց ակումբի անդամներու եւ հիւրերու հարցումներուն:

Միջոցառումին ներկայ էին նաեւ Եգիպտոսի Հայ Կաթողիկէ Վիճակաւոր Գերապայծառ Գրիգոր Օգոստինոս Գուսանը, Հոգշ. Տ. Գաբրիէլ Վրդ. Սարգսեանը, Ռոթարի ակումբներու Եգիպտոսի Շրջանակի փոխտնօրէն Մոհամետ Ասքարը, հայ համայնքի ներկայացուցիչներ եւ ակումբի անդամներ:

Հանդիսութեան աւարտին ներկաներուն բաժնուեցան ՀՀ դեսպանութեան պատրաստած տեղեկատուական նիւթերը:





## ՅՈՒՇԵՐՈՒ ԳԱՏԱՌԻԿՆԵՐ ՅԱԿՈՔ ՅԱԿՈՔԵԱՆԸ

*2013-ի Մարտ 9-ին, Երեւանի մէջ 90 տարեկանին անակնկալօրէն կեանքին հրաժեշտ տուաւ հայութեան մեծատաղանդ գաւակներէն նկարիչ Յակոբ Յակոբեանը, խորապէս ցնցելով զինք ճանչցողները եւ իր արուեստը գնահատողները:*

*Այս տխուր առիթով «Տեղեկատու»-ն դիմեց տիկին Սեդա Սարուխան-Ներետեանին՝ իրմէ խնդրելով որ մեծ արուեստագետին մասին իր յուշերու պատառիկները գրէ, որպէս մինչեւ Հայաստան անոր հաստատուիլը՝ իր հետ մօտիկ ծանօթութիւն ունեցող անձ:*

*Տիկին Սեդա հրաժարեցաւ գրելէ ու փոխարէնը պատմեց Յակոբեանի մասին իր յիշատակները եւ փոխանցեց իր զարմիկին, Յակոբ Յակոբեանի դասընկեր ու մօտիկ բարեկամ՝ Արա Աւետիսեանի մէկ գրութիւնը, որ անցեալին լոյս տեսած է Սոնթրալի «Ապագայ» շաբաթաթերթին մէջ, եւ որուն կարգ մը տուեալներէն օգտուած ենք ներկայ գրութեան պատրաստութեան ընթացքին:*



Սեդա Սարուխան-Ներետեան դուստրն է եգիպտահայ մեծանուն երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխանի, իսկ մայրը՝ քոյրն է արուեստաբան, նկարիչ եւ քանդակագործ Օննիկ Աւետիսեանի:

Սարուխան եւ Աւետիսեան ընտանիքները կը բնակէին Գահիրէի արուարձան Յելիոպոլսոյ իրենց սեփական երկյարկանի առանձնատան մէջ, ուր կը գտնուէին նաեւ երկու արուեստագետներուն արուեստանոցները:

Սարուխանի յետնորդները ցարդ կը բնակին այդ առանձնատան մէջ:

Ըստ տիկին Սեդայի, Յակոբ Յակոբեան եւ Օննիկ Աւետիսեան զօրաւոր եւ խորամատ կապեր ունէին իրարու հետ: Այդ կապը ստեղծուած էր շատ կանուխէն, երբ Օննիկ Աւետիսեան որպէս նկարչութեան ուսուցիչ կը դասաւանդէր Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ, ուր 7 տարեկանէն ի վեր հայրագուրկ մնացած Յակոբեան ուսանած է 1934 - 1941:

Օննիկ Աւետիսեան Վիեննայի մէջ ուսանած շրջանին կեանքի ընկերուհի ընտրած է աստրոլոհի մը, որ իրեն պարգեւած է իրենց գաւակը՝ Արան:

Աւետիսեան Աւստրիոյ մէջ աշխատելու արտօնութիւն չունենալով, ընտանեօք կը փոխադրուի Հալէպ, ուր կարճ ժամանակ

մնալէ յետոյ, իր կողակիցը՝ Հալէպի անցեալ դարու քանականներու կենցաղային նախնական պայմաններուն չզիմանալով, Արան առնելով Վիեննա կը վերահաստատուի:

Վիեննայի մէջ մանուկ Արան իր դպրոցական առաջին ութ տարիները անցընելէ յետոյ, 1937-ին հայրը զինք կը տանի Կիպրոս՝ Մելգոնեան Կրթական Հաստատութիւն, ուր ան տարիէ մը ի վեր կը պաշտօնավարէր որպէս նկարչութեան ուսուցիչ:

Արա Աւետիսեան, յետագային գրելով Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ Յակոբ Յակոբեանի հետ իր հանդիպումին մասին, կ'ըսէ.

-Տեսայ թուիս եւ ազնիւ աչքերով, ամօթխած ու զգայուն 14-ամեայ տղեկը, որ գլուխով մը աւելի կարճ էր ինձմէ: Ան հազած էր Մելգոնեանի պարզուկ տարազը:

Ասիկա Մելգոնեան կատարած առաջին այցս էր, ուր աշակերտներուն մեծամասնութիւնը ծնողագուրկ էր:

Հօրս հետ Վիեննայէն նոր հասած էինք եւ ես այդ ժամանակ միայն գերմաներէն կը խօսէի:

-Das ist der kleine Hagopig (Ասիկա փոքրիկ Յակոբիկն է), - ըսելով՝ հայրս ներկայացուց զինք: Ապա ան աւելցուց.

-Բացառիկ տղայ մըն է, իմ լաւագոյն ա-





շակերտս, օժտուած մեծ տաղանդով: Երբ իր հետ խօսակցելու չափ բաւարար հայերէն սորվիս, վստահ եմ որ իսկոյն լաւագոյն բարեկամներ պիտի ըլլաք:

Արա Աւետիսեան կը շարունակէ՝ գրելով. «Յակոբիկը շուտով դարձաւ շատ աւելի սիրելի ընկեր մը, որ կը վայելէր իմ անկեղծ հիացմունքս: Այս հայրագուրկ պատանին կրնար գծել, նկարել եւ հարազատօրէն քանդակել»:

1945-ին Յակոբեան, առաջին անգամ ըլլալով, կը մասնակցէր «Եգիպտահայ Նկարիչներու Յուլիանոսեան»-ին (Գահիրէի մէջ):

Հայրս իր մասին կը գրէր. «Տասներեք տարեկանին ան արդէն ցոյց կու տար կանխահաս բացառիկ տաղանդ մը: Իր նկարները երբեք պարզամիտ եւ անճարակ տղեկի մը նկարներ չէին, այլ իսկական փոքր նկարներ, բնական տեսարաններ կամ դեմքերու համադրումներ, յաճախ բաւական բարդ, որոնք կրնան վերագրուիլ չափահասի մը, որ արհեստին գիտութիւնը ունի: Իր այս առաջին հանրային ցուցադրութիւնը գիտակներուն եւ արուեստի քննադատներուն կը յուշէր որ ան փայլուն ապագայ մը պիտի ունենար»:

1962-ի Հոկտեմբերին, Յակոբեան Հայաստան կը մեկնէր, ուր շուտով կը նուաճէր համահայկական եւ միջազգային լայն ճանաչում եւ գնահատանք, արժանանալով բազմաթիւ մրցանակներու եւ կոչումներու:

Դարձեալ 1962-ի Հոկտեմբերին, Արա Աւետիսեան Գանատա կը հաստատուէր:

Երեք տասնամեակ անց անոնք Մոնթրէալի մէջ, Յակոբեանի թուուցիկ մէկ այցելութեան ընթացքին, կրկին իրարու կը հանդիպէին:

Յետագային Արա Աւետիսեան այս մասին կը գրէր. «Յակոբին հանդիպիլը կը նմանէր իմ երբե՛ք չունեցած եղբօրս հետ հանդիպումի: Փոքր եղբայրս, նկատի ունենալով որ իրմէ աւելի հասակաւոր էի, երբ տարիներ առաջ իրարու հանդիպեցանք: Այդ ժամանակէն սկսեալ որբուկ տղան եւ ես, միասին նոյն հայրը ունեցանք»:

Այս գաղափարը կը հաստատէ նաեւ տիկին Սեդա Սարուխան-Ներեւեան, որ կը յիշէ թէ Յակոբեան Հայաստան մեկնելէն առաջ շուրջ 10 տարի, ամէն Շաբաթ օր

իրենց բնակարանը կ'այցելէր, ուր «Յակոբիկ»ը եռուզեռ մը ստեղծելէ վերջ իր «հօր» եւ ուսուցիչին՝ Օննիկ Աւետիսեանի հետ կ'առանձնանար ու միասին իրենց շրջապատէն խզուելով, ժամեր շարունակ արուեստի մասին քննարկումներ կը կատարէին:

Սեդա Սարուխան կ'աւելցնէ թէ «Յակոբիկը» իրենց տան մէկ հարազատը կը նկատուէր. բնաւորութեամբ շատ համեստ էր եւ յետագային եւս այդ հարազատութիւնը ու համեստութիւնը պահեց՝ հակառակ իր փառաւոր նուաճումներուն եւ յաջողութիւններուն:

Սեդա Սարուխան կը յիշէ նաեւ թէ իր հայրը Յակոբ Յակոբեանի դիմանկարը գծած էր անոր Հայաստան մեկնելու նախօրէին, եւ այդ նկարը Սարուխան ընտանիքին մօտ մնացած էր քանի մը տասնամեակ:

Արուեստաբան Շահէն Խաչատուրեան շուրջ տասնամեակ մը առաջ, երբ Եգիպտոս կ'այցելէր, կը հանդիպէր նաեւ Սարուխանէնց բնակարանը՝ աչքէ անցընելու մեծատաղանդ երգիծանկարիչին թողած գործերուն հաւաքածոն:

Խաչատուրեան երբ կը տեսնէ Յակոբ Յակոբեանի դիմանկարը, փափաք կը յայտնէ այդ նկարը առնելու եւ իր հետ հայրենիք տանելու, զայն մեծ արուեստագետին յանձնելու:

Սեդա Սարուխան կը խոստովանի թէ այդ պահուն ներքին անբացատրելի զգացումէ մը տարուած, չի կրնար բաժնուիլ այդ նկարէն եւ յանձնել զայն Շահէն Խաչատուրեանին:

Սակայն յետագային, երկրորդ մտածումէ մը յետոյ, կ'որոշէ ծանօթի մը միջոցով այդ նկարը Երեւան դրկել՝ Յակոբ Յակոբեանին: Արուեստագետը իր դիմանկարը ստանալէ յետոյ, կապ կը պահէ Սեդա Սարուխանին հետ եւ հարց կու տայ իրեն թէ՛ անպատեհութիւն մը ունի՞ր նկարը պատկերասրահին յանձնելու: Սեդան այդ մասին իր անմիջական հաւանութիւնը կու տայ, համոզուած ըլլալով որ Սարուխանի վրձինով նկարուած Յակոբեանի դիմանկարին համար պատկերասրահը յարմարագոյն օթեւանը պիտի ըլլար:



## **ՎԵՐՋԻՆ ՈՒՍՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ Ի ՅՈՒՇ ՆԿԱՐԻՉ ՅԱԿՈՐ ՅԱԿՈՐԵԱՆԻ**

*Ստորել կը ներկայացնենք Յակոբ Յակոբեանի մասին այլ գրություն մը, զոր ամերիկահայ ականաւոր մտաւորական Երուանդ Ազատեան ձօնած է՝ ի յուշ մեծատաղանդ արուեստագետին:*

*Երուանդ Ազատեան անձանօթ մը չէ եգիպտահայութեան:*

*Ծնունդով լիբանանահայ ըլլալով հանդերձ, կարելի է զինք նկատել «նախկին եգիպտահայ»:*

*Արդարեւ, Ազատեան վաղ երիտասարդութեան (25 տարեկանէն սկսեալ), 1959-1967 տարիներուն, արժանաւորապէս զբաղեցուցած է Թէքէեանի աթոռը՝ վարելով «Արել»ի խմբագրի պատասխանատու պաշտօնը: Ան եգիպտոսի մէջ յարաբերաբար կարճատեւ իր կեցութեան ընթացքին՝ հրապարակագրական բեղուն իրագործումներու կողքին, ունեցած է հասարակական եւ մշակութային եռուն գործունեութիւն: Սերտ կապեր ունեցած է անցեալ դարու 60-ականներու եգիպտահայ մտաւորական ընտրանիին հետ, որուն մաս կը կազմէր նաեւ Յակոբ Յակոբեան:*

*Յակոբ Յակոբեանի հետ իր կապը շարունակուած է անոր հայրենադարձութենէն վերջ եւս՝ մինչեւ արուեստագետին շիջումը:*

Երբ արուեստագետ մը իր հասուն տարիքին կը շարունակէ ստեղծագործել եւ իր արուեստին երկրպագուները շարունակ անակնկալի առջեւ կը դնէ իր թարմ ու զարմանալի գործերով, մարդիկ, պահ մը մոռնալով իրենց մահկանացու ըլլալը, կը սկսին հաւատալ թէ այդ արուեստագետը դարձած է յաւերժի ճամբորդը ու պիտի մնայ միշտ կենդանի՝ իր այդ ուղեւորութեան վրայ, անշուշտ, մինչեւ որ պատահի... անխուսափելի:

Այդպիսի ցնցում մը ունեցայ, երբ իմացայ Փիքասոյի կորուստը: Կարծէք թէ յաւերժութիւնը ինքն իր վրայ տապալեցաւ ու տարաւ արուեստագետը:

Միեւնոյն ցնցումը ապրեցայ, իմանալով կորուստը արուեստագետ Յակոբ Յակոբեանին, որ անգամ 90-ի սեմին միշտ կը զարմացներ արուեստի աշխարհը իր թարմ ու ինքնատիպ գործերով: Ո՛չ միայն աչքիս պարզուեցաւ սառիլը արուեստագետ ձեռքի մը օդին մէջ, այլ յուզաշխարհս փոթորկեցաւ բազում յիշատակներով, խռովիչ վկայութիւններով, որոնք իմ անձնական կեանքին ու ընտանիքին պարզեւած էին անփոխարինելի ապրումներ:

Յակոբեան եգիպտահայ նկարիչներու հոյլին ամենէն տիրապետող դեմքերէն էր,

տակաւին իր երիտասարդ տարիքին: Եգիպտահայ միւս նկարիչներուն հետ մասնակցած էր յաճախ հաւաքական ցուցահանդեսներու, ինչպէս իր հերթին՝ տուած անձնական ցուցահանդեսներ: Այդ տաղանդաւոր հոյլին անդամներէն ոմանք այսօր կը մնան աղօտ յիշողութիւններու մէջ ու ոմանք ալ չեն յաջողած իրենց համբաւը տարածել Եգիպտոսի սահմաններէն անդին: Սակայն, 60-ական եւ 70-ական թուականներուն անոնք Եգիպտոսի արուեստագետներու երկնակամարին ամենէն փայլուն աստղերն էին, ինչպէս՝ Աշոտ Զօրեան, Օսնիկ Աւետիսեան, Ալ. Սարուխան, Այծեմիկ Պոյաճեան, Զրանդ Անդրանիկեան, Արթէ Թոփալեան, Սիմոն Սամսոնեան, Բիւզանդ Կոճամանեան եւ Զօրեանի աշակերտներէն Եասմին (Յասմիկ Պալլարեան), Ճօ եւ Շուշան Էկոյեան (ծնողները՝ կինոռեժիսոր Ատոմ Էկոյեանի), Ռոզ Փափագեան, Կարպիս (Էտի Եաղճեան), Նորա Իփեքեան (Ազատեան) եւ երգիծանկարիչ Էտմոն Զիրագ: Այս վերջինը Գառզուի հետ կանուխէն հաստատուեցաւ Փարիզ:

Յակոբեան յաւերժօրէն հարցասէր էր՝ բնութեան, կեանքին, արուեստի էութեան անվերջանալի փնտռտուքին մէջ: Զարցականներ ունէր նաեւ հայ ժողովուրդի պատմութեան, ճակատագրին եւ մանաւանդ՝ Զա-



յաստանի ապագային մասին:

Պիտի չմոռնամ երբեք 1962-ի այն երեկոն, երբ բուռն հարցաքննութեան ենթարկեց զիս: Մինչեւ ուշ երեկոյ կը քալէինք Գահիրեի փողոցներէն եւ իր հարցումներուն տարափը վերջ չունէր: Նոր էի վերադարձած Հայաստան կատարած իմ առաջին ճամբորդութենէս, պէտք է ըսել՝ բաւական խառն զգացումներով: Այդ օրերուն Եգիպտոսի հայրենասէր գաղութին մէջ որեւէ աննպաստ արտայայտութիւն Հայաստանի իրականութեան մասին, համազօր էր հայրենասիրութեան: Իր համոզումներուն հաւատարիմ անձը լաւագոյն պարագային կրնար լռել, մանաւանդ որ այդ օրերուն կրկին հայրենասիրութեան կարաւաններ կը պատրաստուէին, ու ես «երկաթե վարագոյրին» միւս կողմէն պարտաւոր էի լուսաւոր խապրիկներ ընծայել իմ հայրենասէր բարեկամներու: Սակայն, մեր բարեկամութիւնը Յակոբին հետ չէր կրնար հանդուրժել կեղծ հայրենասիրութիւնը: Ինք արդէն հաստատուած ու յարգուած նկարիչ մըն էր, լաւ եկամուտով մըն ալ երաշխաւորուած: Իր արուեստագետ եւ արուեստասէր կիներ՝ Մարի, Եգիպտոսի ամենէն յայտնի կարուճեւի հաստատութիւններէն մէկն ունէր, եւ կը բնակէին քաղաքի ամենէն կեդրոնական շէքերէն մէկուն մէջ: Արուեստագետին համար հրաժարիլ այդ բոլորէն՝ անձնօթ ապագայի մը հաշւոյն, առ նուազն տարակուսելի էր: Մանաւանդ որ Յակոբ եւ Մարի ամէն հնարաւորութիւնները ունէին տեղափոխուելու Եւրոպա կամ Ամերիկաներ, որոնք շատ մը եգիպտահայերու երազանքն էին այդ օրերուն:

Հետեւաբար իմ խօսքերը կշռելով պէտք է արտայայտեի իմ տպաւորութիւններս: Կարծեցի թէ բազում բառերով յաջողած էի իմ թելադրութիւնս իրեն փոխանցել որ այն հանգիստ եւ ապահով կեանքը, զոր կը վայելէր ինք Եգիպտոսի մէջ, դժուար թէ յաջողէր գտնել Հայաստանի մէջ: Իսկ գալով իր ինքնատիպ արուեստին, կրնար իր կարգին ենթարկուիլ կարգ մը բռնադատութեանց: Յակոբը կարծիք չէր յայտնէր, բայց ես համոզուած էի որ յաջողած էի սանձել իր բուռն խանդավառութիւնը:

Սակայն, քանի մը օր վերջ պիտի գարմացներ զիս՝ յայտնելով թէ կը պատրաստուէր ընտանիքով փոխադրուիլ Հայաստան: «Ի

վերջոյ մեր հայրենիքն է ան, - կ'ըսէր Յակոբ, - ոչ մէկ անհատ, որքան ալ տաղանդաւոր ըլլայ՝ չի կրնար իր ազգէն մեծ ըլլալ: Մենք ճակատագրուած ենք ապրելու միայն մեր հայրենիքին բախտը»:

Յակոբեան, համեստ ու խոնարհ անձնաւորութիւն մը, հետամուտ չէր փառքի եւ հարստութեան: Միայն ետքէն կեանքը ցոյց տուաւ, որ փառքն էր որ կը հետապնդէր զինք:

Ներգաղթելէ ետք, ինք սկիզբը եօթը տարի ապրեցաւ Գիւմրիի մէջ (Լենինական), ուր արդէն սկսած էր ստեղծագործել հայրենի բնութեան անմահ բնապատկերներ: Սակայն, այդ բոլորը բաւարար չէղան ուշադրութիւնը գրաւելու արուեստի վճարեալ քընտրատներուն: Եւ իրօք, օր մը քմծիծաղով նկատեցի յօդուած մը Յակոբեանի մասին «Սովետական Հայաստան» ամսագրին մէջ: Յօդուածին մէջ արտատպուած էր թաղի մը նկարը, ուր հաւեր ու կենդանիներ կը շրջէին գունազեղ լուացքներու ներքեւ, որոնք փռուած էին պարաններու վրայ: Յօդուածին մէջ արդէն «սոց-ռեալիզմ»ի բռնաշապիկը հագցուած էր արուեստագետին՝ մեկնաբանելով որ արուեստագետը արտասահմանի կապիտալիստական աշխարհին մէջ կը նկարէր գորշ գոյնով տեսարաններ եւ տխուր բանուորներ եւ հաստատուելով «սոցիալիստական» դրախտին մէջ, անոր գոյները զուարթացած էին եւ արուեստագետին աշխարհայեացքը դարձած էր աւելի լաւատեսական: Շիտակը, տրտմեցայ իր հաշւոյն, հարց տալով ես ինձի . «Ա՛յս էր ուզածդ, Յակոբ»:

Սակայն Յակոբեան մնաց հարազատ իր անձին, իր սերին, համոզումներուն եւ իր փիլիսոփայական մօտեցումներուն: Եւ իրօք, ի վերջոյ գնահատուեցաւ իր արուեստը 1987-ին, իրեն ապահովելով Սովետական Միութեան պետական մրցանակ եւ 1988-ին ալ Սովետական Միութեան Գեղարուեստի Ակադեմիայի թղթակից անդամակցութեան կոչում: Երեւանը, բնականաբար, չէր կրնար ետ մնալ Մոսկուայէն, հետեւաբար զինք պատուեց իբրեւ պետական կրկնակի մրցանակակիր եւ Երեւանի պատուաւոր քաղաքացի:

Յակոբեան, որ նախասիրողն է գորշ ու գուսպ գոյներու, հանդիսացաւ մէկ անդամը



սփիւռքահայ (աւելի՛ եգիպտահայ) արուեստագետներու այն համաստեղութեան, որոնք ծիածանեցին Սփիւռքը Հայրենիքին: Այդ խումբին արժանաւոր արուեստագետներն էին՝ Գոհար Գասպարեան, Միհրան Երկաթ, Արմինէ Թիւթիւնճեան, Աննա Նշանեան, արուեստագետ Առաքել Պատրիկ, մտաւորականներ Յակոբ Արամեան, Յակոբ Թրեանց, Գառնիկ Ստեփանեան, Յովսէփ Թիւթիւնճեան, Բարսեղ Թաշճեան եւ ուրիշներ:

Յակոբեանի արուեստը կը յատկանշուի գոյներու սակաւութեամբ, սակայն իր երանգներու բազմակի շերտաւորումները աւելի խօսուն կը դարձնեն իր բնակարները: Թէեւ ան Փարիզի մէջ հետեւած էր Անտրէ Լօթի դպրոցին, սակայն անոր համար աւելի հոգեհարազատ էր կարծես, արտայայտչապաշտ Բեռնար Բիւֆէի տրտում աշխարհը, միայն սա տարբերութեամբ, որ Բիւֆէ իր թախիծին կը միախառնէր սարքազմը, սինիզմը՝ աշխարհին ու կեանքի երեւոյթներուն հանդէպ, եւ ի վերջոյ իր դառնութիւնը եւ յռետեսութիւնը զինք մղեցին անձնասպանութեան (1999): Իսկ Յակոբեանի թախիծը աւելի ճակատագրապաշտ է, աշխարհը ընկալելու եւ ընդունելու այնպէս ինչպէս որ է:

Յակոբեանի հոգիին էատարըը Հայաստանի հողն էր, անոր ամայի տարածութիւններն էին, երբեմն, անոր ընդերքէն ցցուող ծառի կռնձած արմատները՝ նահատակներու ոսկորներուն նման դեռ կեանքին կառչած: Սակայն իր փիլիսոփայական տարերքին մէջ տեղ մը ան կը հանդիպէր ամերիկացի կին նկարիչ ճորճիա Օ'քիֆին՝ անապատային ամայքներու իր նախասիրութիւններով: Ամայքներ ու անապատային անդաստաններ, ուրկէ կարծէք տիեզերական խուլ աղմուկներ ու պատգամներ կ'արձագանգէն:

Հակառակ որ իր պաստառները՝ դաշտերը, ծառերը, Արարատները, լուռ ու կայուն վիճակ մը կը պարզեն, սակայն միշտ պատրաստ են յաջորդ ոստումին, զարգացման յաջորդ փուլին: Անոր սկզբնական նկարները կը ներկայացնեն պարզ տիպարներ, յոգնաշան աշխատաւորներ (կարծէք Փիքասոյի կապոյտ շրջանէն) եւ բնութեան լայնահուն տափաստաններ, բարձրանալ չհամարձակող բլուրներ ու թուփեր: Սակայն, հետզհե-

տէ ան սկսաւ օգտագործել դերձակի անկենդան մարմինները, (dummy) կենդանացնելով զանոնք, հրաւիրելով պարի, սիրային քնքշութեան, կռիւի կամ մարդկային այլազան հարազատ ապրումներու:

Յակոբեան մեղմ ու հեզ անձնաւորութիւն մը ուներ՝ աւելի հեզ առօրեայով. սակայն կըրնար ձեր հոգին բզկտել, երբ կը փորձէր բնութագրել հայ ժողովուրդի ճակատագիրը: Անմոռանալի պաստառ մըն է իր ոչխարներու հօտը, ամրան արեւին տակ, գլուխները կրթնցուցած պատին, մինչ կողքի ցիցին վրայ կախուած կը մնայ իրենցմէ մէկուն մորթուած մարմինը: Հօտը կարծէք համակերպած է իր ճակատագրին: Ուրիշ պաստառի մը մէջ անգլուխ բազմութիւններ խուճապահար կը փախչին անորոշ ուղղութիւններով՝ խորհրդանշելով հիւլեական դարու խելառ սարսափները:

Անդին ծաղիկներու հոգիներէն անիմալի յուզումներ կը քաղէր: Իր դուստրը՝ Նորա Յակոբեան, որ փոքր տարիքէն արուեստագետի խառնուածք ցուցաբերած էր, երբեմն կը գանգատէր իր ուսուցչուհիին՝ Նորա Իփեքեան-Ազատեանին, թէ. «Իմ հայրս խենթ է. թարմ ծաղիկները տուն կը բերէ, բայց կը սպասէ, որ թառամին անոնք՝ գծելէ առաջ»: Ինչպէ՞ս կրնար փոքրիկ աղջնակը գիտնալ, թէ հայրիկը կեանքի ու մահուան ինչպիսի՞ խորհուրդներ կը քամեր այդ թառամող ծաղիկներէն...:

Յակոբեանի նախասիրած առարկաներէն էին նաեւ մետաղեայ կտորները եւ ժանգոտած գործիքները, որոնք կենդանութիւն կը ստանային իր վրձինին տակ: Օրինակ, քրքանի մը սպառնացող առամներուն դիմաց ան կը նկարէր դիւրաբեկ հաւկիթ մը՝ խորհրդանշելով կեանքի ազագուն վիճակը, ճակատագրի երկաթէ ճանկերուն դիմաց: Հետզհետէ մետաղի այդ կտորները իր պաստառներէն դուրս գալով, ինքնուրոյն կեանքով, սկըսած էին դառնալ արձանիկներ, այնքան արտայայտիչ, այնքան մարդկային, որ միայն Յակոբեանի ստեղծագործ ձեռքերը կրնային ընծայել այդպիսի ապրումներ: Իմ վերջին այցելութեան, արդէն 300-ի կը հասնէին այդ արձանիկները: Ամէն այցելութեանս միշտ նորութիւն մը ուներ ան ցոյց տալիք: Բնութեամբ հանդարտ, սակայն միտքով անհանդարտ եւ խուզարկող անձնաւորութիւն մը



ուներ ան: Միշտ նորին եւ անակնկալին ակընկալութեամբ կը մտնէի իր արուեստանոցի դուռէն եւ միշտ հիացած ու լիացած կը բաժնուէի իրմէ:

Մտաւորականի լուրջ խմոր ուներ ան. պատմաբանի յաւակնութիւններ չունէր երբեք, սակայն անընդհատ կը հարցուփորձէր մեր ժողովուրդի պատմութեան անցքերը, մեր հաւաքական վերաբերումները եւ միշտ կը յանգէր հետաքրքրական եզրակացութիւններու, նոյնիսկ եթէ ընդհանուրին հաւանութեան չարժանանային անոնք: Կը գրէր յօդուածներ, էսսէներ, խոհական էջեր, ուրկէ միշտ կը պարզուէին իր խուզարկող միտքը, իր ինքնատիպ եւ անկախ մտածողութիւնը: Կը տառապէր հայ ժողովուրդին բռնած ընթացքով եւ յաճախ հարց կու տար. «Ո՞ր կ'երթանք այսպէս. ո՞ր մնացին մեր ազգային աւանդական արժէքները», եւ գրեթէ արցունքը կը խտանար իր մութ աչքերուն:

Հայաստանի տնտեսական վիճակը եւ արտահոսքը մասնաւորաբար կը տառապեցնէին զինք: «Ես ապահով կեանք մը ունիմ, սակայն կ'ամչնամ դուրս ելլելու եւ ժողովուրդիս աչքերուն նայելու, երբ ան համատարած թշուառութեան մէջ կը տուայտի», - կ'ըսէր յաճախ:

Իր խոհական գրութիւնները լոյս տեսան ընդարձակ հատորի մը մէջ, 2006 թուին, Վահան Թէքէեան բանաստեղծէն փոխ առնուած վերնագրով մը՝ «Ու Մերթ Լացաւ Ու Մերթ Խնդաց Իմ Հոգիս»:

Յակոբեան բանաստեղծը ճանչցուած էր Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ իր աշակերտական տարիներէն, երբ Թէքէեան գրականութիւն կը դասաւանդէր միեւնոյն հաստատութեան մէջ: Թէքէեան զինք «Յակոբիկ» կը կոչէր, եւ օր մը Եգիպտոս վերադարձին երբ կը հանդիպի բանաստեղծին, ան երբեմնի Յակոբիկը միտքով ու ճաշակով հասունցած նկատելով՝ անոր կը նուիրէ Շահան Շահնուրի «Նահանջը Առանց Երգի» վէպը: Յակոբեան միացող անձնաւորութիւն մըն էր, որ իր սիրած բանաստեղծին հետ կրնար արդարացիօրէն ըսել:

Ու եթէ սերըս ոմանք  
Երկինքին վրայ անսահման  
Տեսան ծուխի մը նման  
Կըրակն անոր չըտեսան...:

Յակոբեանի թախծոտ արուեստի տիրութեան մշուշին եւ Թէքէեանի մթամած քերթողութեան մէջ գոյութիւն ունին այնպիսի համանմանութիւններ, ուր բանաստեղծութիւնը կը վերածուի պաստառի ու նկարը՝ քերթողութեան:

Վերջին այցելութեանս, առանց իր ձայնը բարձրացնելու, զսպուած բարկութիւն մը կար իր մէջ: «Եկուր քեզի նկար մը ցոյց տամ», - ըսաւ՝ բերելով հսկայ պաստառ մը, որ ամբողջութեամբ ծածկուած էր մարդկային գանկերով, ներառեալ իր նահատակ մեծ հօր գանկը: Նկարին մէջտեղը թըքերէնով, ամբողջ պաստառի երկայնքին գրած էր Աթաթիւրքին ցեղապաշտական կարգախօսը. «Նէ մութլու թիւրք ի՛նք տիյենէ» («Երանի անոր որ թուրք եմ կ'ըսէ»):

-Այս գործը պիտի նուիրեմ թանգարանի մը: Ասիկա իմ պատգամս է մեր ժողովուրդին: Իմ պատգամս է համայն մարդկութեան: Թող տեսնեն, որ թուրքին մասնակցութիւնը մարդկային քաղաքակրթութեան, միայն այս է՝ ցեղասպանութիւնը:

Յակոբեան արուեստագետը, հայն ու Մարդը՝ այդ վրէժով ալ գնաց անդէնական:

Համեստ էր ինք, անյաւակնոտ: Մեծութիւն չէր փնտռած կեանքին մէջ, բայց մեծութիւնը պարտադրուեցաւ իրեն: Յաւիտեան պիտի ննչէ հայոց հանճարներու երեւանեան Պանթոնին մէջ՝ Սարոյեանի, Սարեանի, Կոմիտասի, Շիրազի, Հրանտ Մաթեւոսեանի, Սիլվա Կապուտիկեանի եւ միւս մեծամեծներուն դրացնութեան մէջ:

«Յակոբ, չխանգարես նինջը այդ մեծամեծներուն քու տազնապեցնող հարցադրումներովդ», - պիտի ըսէի իրեն, եթէ տեսած ըլլայի զինք իր մահուընէ առաջ:

Կը յիշեմ իր գուրգուրոտ պատուերը անցեալ Նոյեմբերի մեր վերջին հանդիպման, մտերմօրէն ըսելով. «Յաջորդ Երեւան գալուդ, չմոռնաս մեզի այցելելու»:

-Ինչպէ՞ս կրնամ մոռնալ,- պատասխանեցի:- Ամէն այց քու աշխատանոցդ միտքի եւ հոգիի խրախճանք մըն է: Ամէն այց՝ արուեստի ուխտագնացութիւն մը:

Սակայն, չէի կրնար գուշակել, որ արդէն այդ օրը իմ վերջին ուխտագնացութիւնս էր:

*Երուանդ Ազատեան, «ԱԶԳ» Օրաթերթ*



*Եգիպտահայ նկարիչներու խումբը Գահիրեի մէջ, 1961-ի հաւաքական ցուցահանդեսէն վերջ: Նստած՝ ձախէն աջ.- Զրանդ Անդրանիկեան, Շուշան Էկոյեան եւ Ալ. Սարուխան: Ոտքի՝ Յակոբ Յակոբեան, Այծեմնիկ Պոյաճեան, Բիւզանդ Կոճամանեան, Ճօ Էկոյեան, Օննիկ Աւետիսեան, Շաքէ Ալպան (լուսանկարիչ), Նորա Իփեքեան-Ազատեան, Աշոտ Չօրեան եւ Սիմոն Սամսոնեան*

## ՆՈՐ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

### **ՏՈՒՐԷՆ ՊԱՅՐԱՄԵԱՆԻ ՀԱՅ ԳԻՐ-ՔԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ - 1888-2011 ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՅՈՒՅԱԿ ՀԱՏՈՐԸ (ԱՆԳԼԵՐԸ ԵՒ ԱՐԱՐԵՐԸ)**

Վերջերս լոյս տեսաւ եգիպտահայ մտաւորական Տոքթ. Սուրեն Պայրամեանի «Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ: 1888-2011, Մատենագիտական Ցուցակ» հատորին անգլերէն եւ արաբերէն տարբերակը (մէկ գիրքով): Զեղինակին սոյն հատորը տարի մը առաջ հրատարակուած էր հայերէնով:

Հատորը հրատարակութիւնն է Գահիրեի Ազգային Առաջնորդարանի «Բօլ Բիլիտճեան Հրատարակչական Ֆոնտ»-ին, իսկ անոր տպագրութիւնը իրագործած է «Նու-

պար» տպագրատունը:

Հատորին անգլերէն բաժնին յառաջաբանը գրած է Եգիպտոսի մօտ ՀՀ դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեան, իսկ արաբերէն բաժնին յառաջաբանը՝ Գահիրեի Համալսարանի բանասիրական ֆակուլտետի «Հայագիտական Կեդրոն»-ի տնօրէն Տոքթ. Մահմուտ Աալլաուի:

Այս առթիւ կը շնորհաւորենք Տոքթ. Սուրեն Պայրամեանը եւ Նորանոր յաջողութիւններ կը մաղթենք իրեն:





## ՀԱՅԱՍՏԱՆԵՒ ԲԱՂԱ-ԲԱԿՐԹՈՒԹՅՆԵՐՈՒ ԵՐԿԽՕՍՈՒԹՅՆ - 500 ՏԱՐԻ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԲԵՐՈՒՄ



25 Փետրուար 2013-ին, Գահիրեի Համալսարանի Բանասիրական Ֆակուլտետի Հայագիտական Կեդրոնը կազմակերպած էր վերոնշեալ խորագրով իր միջազգային հինգերորդ համաժողովը՝ Հայաստանէն ներս եւ դուրս հայ գրատպութեան 500-րդ տարեդարձին տօնակատարութիւններուն, ինչպէս նաեւ Երեւանը 2012-ի ընթացքին «Գիրքի Համաշխարհային Մայրաքաղաք» հռչակուելուն զոյգ առիթներով:

Համաժողովի բացման նիստին բարի գալուստի խօսքերով ելոյթ ունեցան Հայագիտական Կեդրոնի տնօրէն Տոքթ. Սոհամետ Ալլաուի եւ Գահիրեի Համալսարանի Բանասիրական Ֆակուլտետի տեկան Տոքթ. Մո'թազ Սայետ Ապտալլահ:

Եգիպտոսի մօտ ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեան իր ելոյթին մէջ շեշտեց թէ այս համաժողովները «կարելոր եւ զատորոշ ակնդրութիւն» դարձած են՝ շնորհիւ Գահիրեի Համալսարանի պատասխանատուներու եւ ուսումնասիրողներու ու մասնագետներու համաստեղութեան ճիգերուն, ինչպէս նաեւ եգիպտահայ համայնքի մշակութային կառոյցներուն աջակցութեան:

Ան նոյնպէս վեր առաւ Հայագիտական Կեդրոնին դերը Հայաստանի եւ հայերու մասին գիտական լուրջ եւ կշռադատուած

տեղեկութիւններու մատուցումի աշխատանքին մէջ:

Դեսպանը շեշտեց նաեւ թէ քաղաքակրթութիւններու երկխօսութեան նպատակն է ժողովուրդներու մերձեցումը, փոխհասկացողութիւնը եւ փոխադարձ լայնախոհութիւնը, անկախ գոյութիւն ունեցող ազգային եւ կրօնական տարբերութիւններէն:

Ապա ան եզրակացուց թէ ապագայի մեր ակնկալութիւնները կրնան իրականանալ միայն քաղաքակիրթ, անկեղծ եւ լայնածիր երկխօսութեամբ:

Համաժողովին ելոյթներով կը մասնակցէին 20 հոգի՝ որոնցմէ հինգը հայ (երեք հայաստանցի եւ երկու եգիպտահայ): Համաժողովը կայացաւ չորս նիստերու ընթացքին, զորս վարեցին երեք ատենավարներ յանձինս Տոքթորներ՝ Եուսէֆ Ապտէլ Ֆաթթահ Ֆարակի (Տար Էլ Ուլում - Գահիրէ), Սոհամետ Աֆիֆի Ապտէլ Խալէքի (Բանասիրական Ֆակուլտետ - Գահիրէ) եւ Սոհամետ Ռիֆաաթ Էլ Իմամի (Բանասիրական Ֆակուլտետ - Տամանհուր):

Համաժողովին բոլոր մասնակիցներն ալ ներկայացուցին Հայաստանի եւ հայութեան առընչուած նիւթեր:

Հայ մասնակիցներուն թեմաներն էին հետեւեալները.

շարունակելի էջ 25



## ԵՐԲ ՅԱՂԹ-ԱՆԱԿԸ ԿԸ ԳՏՆԷ ԱՐԺ-ԱՆԱԴՈՐՆԵՐԸ

Մանուկներուն եւ պատանիներուն մէջ արուեստի այս կամ այն տեսակին նկատմամբ դոյզն հակումէն մինչեւ շնորհալիներու բացայայտումին ու անոնց այդ կարողութիւններուն զարգացումին ուղղուած նպատակային իւրաքանչիւր ձեւ եւ գործնական իւրաքանչիւր նախաձեռնութիւն արժանի է ամենայն գնահատանքի եւ քաջալերութեան: Եւ աճող սերունդին առաւելագոյն ներգրաւուածութիւնը նմանատիպ նախաձեռնութիւններուն մէջ (ներհամայնքային կամ արտահամայնքային մակարդակներով), կը մնայ կրթական գործի պատասխանատուներուն գլխաւոր առաջնահերթութիւններէն:

Այդպիսի հրաշալի առիթ մըն էր 2012-ի Դեկտեմբերին Եգիպտոսի մեծագոյն եւ ամենայայտնի շինարարական ընկերութիւններէն EMAAR MASR-ի կազմակերպած «Սթ Թաւն Տարս Դպրոցական Տաղանդներու Առաջին Մրցոյթ»ը, որուն իրենց մասնակցութիւնը բերին Գահիրէի յիսունէ անէլի դպրոցներէ բազմահարիւր աշակերտներ՝ հանդէս գալով կատարողական արուեստի այլազան ճիւղերու մէջ (երգ, նուագ, յօրինում, պար, մարզական պար, ասմունք, թատերական մենախօսութիւն եւ այլն): Իւրաքանչիւր մասնակիցի համար մշակութային նմանատիպ ձեռնարկներու մէջ պարզապէս ընդգրկումն անգամ մեծ հաշուով ինքնին յաղթանակ է, յաղթանակ՝ արուեստի ճամբով նիւթականէն դէպի հոգեւորը մարդկային անձնական եւ համընդհանուր ձգտումներուն:

Սակայն, որքան մեծ է յաղթանակի արժեքը, երբ մրցոյթի դատական կազմը, ի պատիւ իրեն, գերծ մնալով մրցակցային արուեստի գնահատման հարցին մէջ քիչ մը ամէն տեղ տարածուած անձնական շահագրգիռ մօտեցումներէ, գնահատման առարկայական մօտեցում կը ցուցաբերէ՝ յաղթանակը շնորհելով ամենաարժանա-

ւորներուն:

Եւ որքան առաւել մեծ է յաղթանակը եւ այդ յաղթանակին բերկրանքը, երբ հարիւր հազարաւոր բազմազգ աշակերտութեան ընտրեալներուն մէջէն, երկու բարձրագոյն մրցանակները բաժին կը հասնին Գահիրէի հայ համայնքի հազիւ մէկ-երկու հարիւր հաշուող դպրոցական տարիքի պատանիներէն երկու շնորհալիներու:

Արդարեւ, «EMAAR MASR-ի Դպրոցական Տաղանդներու Առաջին Մրցոյթ»ին, ի թիւս այլոց, իրենց մասնակցութիւնը բերին ԶԲԸՄ-ի Գահիրէի մասնաճիւղի «ԾԻԱԾԱՆ» մանկական երգչախումբի նախկին անդամներ Ռուբէն Սաատ՝ Գալուստեան-Նուպարեան Վարժարանի Գ. Երկրորդականի աշակերտ եւ Ալեքսի Փափագեան՝ Lycée Français-ի Բ. Երկրորդականի աշակերտ:

«ԾԻԱԾԱՆ» երգչախումբին մէջ իր մասնակցութեան երեք տարիներուն, Ալեքսի բացայայտած է ինքզինք որպէս երաժշտական կարողութիւններով օժտուած պատանի, յատկապէս դաշնամուրային կատարողութեան մարզին մէջ՝ ուսուցիչ ունենալով Ֆոթինի Իսիտը, իսկ Ռուբէն Սաատ երգչախումբի հիմնադրութեան առաջին օրէն սկսեալ, ութ տարի շարունակ եղած է երգչախումբի ամենանուիրուած եւ ամենաշնորհալի անդամներէն՝ իր մեներգներով զարդարելով համերգային շատ ելոյթներ: Անոր երգչային-կատարողական կարողութիւնները «ԾԻԱԾԱՆ»էն դուրս՝ զուգահեռաբար կը մշակուէին ու կը կատարելագործուէին նաեւ Նուպարեան Ազգային Վարժարանի մէջ՝ երգ-երաժշտութեան ուսուցիչ, արհեստավարժ երգչուհի եւ «ԾԻԱԾԱՆ» մանկական երգչախումբի ձայնամարզութեան (վոքալի) պատասխանատու Գոհար Ղազէլեանի խնամքին տակ:

«Սթ Թաւն Տարս Դպրոցական Տաղանդներու» քանի մը հանգրուանով ընթացած



մրցոյթի եզրափակիչ փուլին համար (16 Փետրուար 2013) ընտրուած էին 30 կատարումներ (միայնակ կամ խմբային)՝ դատական կազմի անդամներ ունենալով արուեստագետներ Պոչրա, Յիւսէյն Ալ-Իմամ եւ Մակտի Սապեր: Անհամբեր սպասումի, լարումի եւ պատասխանատուութեան փոթորկող զգացումներով զսպանակուած էին բոլորը՝ թէ՛ ելոյթ ունեցողները, թէ՛ անոնց ուսուցիչները եւ թէ՛ հարազատները: Մրցողներու ցանկին մէջ Ալեքսիին եւ Ռուբէնին ելոյթները նշանակուած էին յաջորդաբար: Անոնք բեմ բարձրացան եւ անոնցմէ իւրաքանչիւրին ելոյթը իր ստեղծագործական մտածողութեան թարմութեամբ եւ կատարողական վարպետութեամբ գերազանցեց բոլորին սպասումները՝ գերելով թէ՛ հանդիսատեսը եւ թէ՛ ժիւրիի իւրաքանչիւր անդամը՝ հաւասարապէս: Ալեքսի Փափագեան ներկայացաւ «Երկու Յարիւր Օրերու Սիրոյ Պատմութիւն» հետաքրքրական իր յօրինումով, զոր անձամբ փայլուն կերպով կատարեց դաշնակի վրայ: Իսկ Ռուբէն Սաստ ներկայացաւ որպէս հասուն մեներգիչ՝ հրաշալի կերպով կատարելով Առնօ Բաբաջանեանի «Թագուհի Գեղեցկութեան» երգը՝ բնականաբար հայերէնով: Մենք այդ երգին իր առաջին անմոռանալի կատարումը կը յիշենք տակաւին

անցեալ տարուրնէ՝ Առնօ Բաբաջանեանի ծննդեան 90-ամեակին նուիրուած «ԱՐԱՔՍ» երգչախումբի համերգէն:

Ժիւրիի անդամները, մեր տղոց ելոյթներէն անմիջապէս յետոյ յաջորդաբար խօսք առնելով, իրենց հիացումը արտայայտեցին գերադրական բառերով՝ Ալեքսիին մէջ տեսնելով (իրենց իսկ խօսքերով) «ապագայ Եաննի մը», իսկ Ռուբէնին մէջ տեսնելով «կայացած երգիչ մը» եւ երգչային ասպարեզի «ապագայ գերաստղ մը»: Իսկ այդ կը նշանակէր, որ բոլորիս սպասումներն ու ժիւրիի արձագանգը համահունչ էին, հետեւաբար մրցանակային տեղերու ակնկալիքը խիստ տրամաբանական, բայց արդէօք իրատեսական:

Բոլոր կատարումները լսելէ եւ ժիւրիի խորհրդակցութեան երկար ու ձիգ վայրկեանները բոլորելէ ետք, բեմ բարձրացան զոյգ հաղորդավարները: Անոնց կողմէ մրցանակակիրներուն անուններուն յայտարարութեամբ, համընդհանուր ոգեւորութեան մէջ բեմ կը հրաւիրուէին համապատասխանաբար 6-րդ, 5-րդ, 4-րդ եւ 3-րդ տեղերու մրցանակակիրները՝ յուսախաբութեան, տարակուսանքի եւ կամ լաւագոյն արդիւնքի լիակատար ուրախութեան հակոտնեայ ապրումներու մղելով մեզմէ իւրաքանչիւր:



Սակայն, որքան անակնկալ՝ թերևս նոյնքան ալ ակնկալելի, բայց հաստատապես աննկարագրելի ուրախութեան յորձանք մը փոթորկեց բոլորիս սրտերը, երբ առաջին եւ երկրորդ տեղերուն որպէս մըրցանակակիրներ բեմ հրաւիրուեցան մեր տղաքը՝ Ալեքսին որպէս առաջին եւ Ռուբենը՝ որպէս երկրորդ մրցանակակիր: Արժանապատիւ կեցուածքով, շնորհաւորանքի գրկախառնումով եւ իրենց գլուխներէն վեր պահած հայկական եռագոյնով, յաղթական երկու հայորդիները բարձրացան բեմ:

Տպաւորիչ բազմաթիւ ելոյթ ունեցողներուն մէջ որքա՛ն առանձնայատուկ եւ որքա՛ն յատկանշական պետք է եղած ըլլային Ալեքսին եւ Ռուբենին ելոյթները որ ժիրիի անդամներուն չխանգարեց նոյնիսկ կատարումներուն իրենց համար անծանօթ ըլլալը (Ալեքսին պարագային որպէս ինքնուրոյն յօրինում՝ այսինքն անծանօթ նիւթ, իսկ Ռուբենի պարագային իրենց չհասկըցած լեզուով հնչող, անծանօթ երգ): Այս յստակ ցոլացումն է նախ՝ ժիրիի բարձր արհեստավարժութեան եւ անաչառութեան, ապա՝ մեր տղոց կատարումներուն որակապէս ընդհանուրէն բացայայտ առաւելութեան եւ վերջապէս՝ ներկայացուող երաժշտութեան գեղարուեստական բարձր արժանիքներուն:

Անկարելի է այստեղ չիշել որ Ռուբեն Սաատ իր աշխոյժ բեմական գործունեութեան կողքին (երգ, պար, թատրոն), նաեւ որպէս Հայ Եկեղեցւոյ դպիր առ այսօր կը ծառայէ Ս. Գր. Լուսաւորիչ Առաջնորդանիստ եկեղեցիին մէջ: Միաժամանակ ան որպէս մեներգիչ մաս կը կազմէ Գահիրէի Ազգային Առաջնորդարանի «ԱՐԱՔՍ» երգչախումբին: Երեւանի մէջ 2012-ին «մենակատար» անուանակարգով մասնակցած է «ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Առաջին Փառատօնին՝ արժանավայել կերպով ներկայացնելով մեր համայնքը Երեւանի, Գիւմրիի եւ Ծաղկաձորի բեմերէն: Ռուբեն Սաատ արդէն տասը տարի է, որ իր երգչային շնորհը կը կատարելագործէ երգերաժշտութեան ուսուցիչներ ունենալով Գոհար Ղազելեանը եւ Միհրան Ղազելեանը:

Մեր համայնքի եւ անձնապէս մեզ համար մեծ հպարտութիւն է, երբ մրցոյթի եզրափակիչ փուլին աւելի քան երեսուն բազմատեսակ ելոյթներէ ետք, առաջին երկու տեղերը կը խլեն մեր համայնքի երկու տաղանդաւոր անդամներ՝ երկու «Ծիւծան»-ցիներ:

Այս առիթով «ԾԻԱԾԱՆ» երգչախումբը գնահատանքի, շնորհաւորանքի եւ խընդակցութեան յատուկ ընդունելութիւն մը կազմակերպեց իր նախկին անդամներուն ի պատիւ, իսկ Գահիրէի ՀԲԸՄ-ի վարչութիւնը մասնաւոր «Գնահատանքի Գիր»ով եւ խրախուսական գումարներով պարգեւատրեց զիրենք:

«Դպրոցական Տաղանդներու Առաջին Մրցոյթ»ին վաստակուած այս հպարտալի յաղթանակներուն առթիւ, կրկին կը գնահատենք իրենց ասպարեզներուն մէջ փայլուն հեռանկար ունեցող մեր պատանիներուն տաղանդը եւ սրտանց կը շնորհաւորենք Ալեքսին եւ Ռուբենը, իրենց ընտանիքները, «ԾԻԱԾԱՆ»ի ամբողջ կազմը, Գահիրէի ՀԲԸՄ-ի պատասխանատուները, «ԱՐԱՔՍ» երգչախումբը, Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարանը, Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցիին դպիրները եւ ամբողջ հոգեւոր դասը, որովհետեւ յիշեալներէն իւրաքանչիւրը լումա մը ունի այս յաջողութեան մէջ եւ այս յաղթանակը իրաւամբ կրնայ համարել նաեւ իրը: Եւ վերջապէս կը շնորհաւորենք փոքրաթիւ մեր համայնքը, որ իր ծոցին մէջ ծնունդ կու տայ արուեստի աշխարհին մէջ փայլող եւ յայտնապէս ապագայ խոստացող Ալեքսին եւ Ռուբենին պէս երիտասարդներու: Կը քաջալերենք զիրենք, այն վստահ համոզումով թէ ազնիւ պայքարի մէջ միշտ ալ յաղթանակը կը գտնէ արժանաւորները:

*Միհրան Ղազելեան՝  
«ԾԻԱԾԱՆ» եւ «ԱՐԱՔՍ»  
երգչախումբերու խմբավար,  
Գալուստեան-Նուպարեան Ազգային  
Վարժարանի երգի ուսուցիչ*





## ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ԾՆՆՌԵԱՆ 110-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՄԵՐԳ

«Արաքս» երգչախումբի յոբելյենական համերգը, հայազգի մեծագույն նուագահան Արամ Խաչատրեանի ծննդեան 110-ամեակին (1903-1978) առթիւ, տեղի ունեցաւ Շաբաթ, 16 Մարտ 2013-ի երեկոյեան, Յելիոպոլսոյ Պըլըքտանեան հանդիսասրահին մէջ:

Եզիպտահայ Թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի հովանաւորութեամբ եւ Գահիրէի Ազգային Իշխանութեան կազմակերպութեամբ կայացած այս համերգին գեղարուեստական ղեկավարն էր հմուտ խմբավար Միհրան Ղազէլեան, որ վեց երկար ամիսներ տեւող յարատեւ աշխատանքով պատրաստած եւ իրագործած էր բաւական ճոխ ծրագիր մը:

Համերգը կ'ընդգրկէր «Արաքս» երգչախումբին կատարմամբ տասը խմբերգներ, երեք մեներգներ՝ փայլուն կատարմամբ Արա Քեօհնէլեանի, Սիլվա Թերզիպաշեանի ու Ռուբէն Սաատի: Ունէինք նաեւ մեծ կտաւի մեներգային-խմբերգային քանթաթ մը՝ «Ձօն Յնծութեան», որուն մեներգային բաժինը մեծ վարպետութեամբ կատարեց Գոհար Ղազէլեան:

Ներկայացուցեցաւ եռերգ մը՝ «Մանկանց Լուսէ Երազը» վերնագրով, որ կատարեցին

Անայիս Սալէի, Գոհար Վարդանեան ու Վարդուհի Արթինեան:

Երգչախումբին դիւլի նուագակցութիւնները կը կատարէր Ռուբէն Թերզիպաշեան:

Կային նաեւ պարային ներկայացումներ «Չանգեզուր» (պարուսոյց՝ Սիւզան Յակոբեան-Գարգուր) եւ «Սարդարապատ» (պարուսոյց՝ Գարուին Մազլումեան) պարախումբերու երիտասարդներուն կատարմամբ:

Բացի նշեալներէն Խաչատրեանի կեանքին ու երաժշտութեան մասին վաւերագրական շարժանկար մը ցուցադրուեցաւ:

Հմուտ երաժշտագետ ու դաշնակահար Հայկ Աւագեան, որ ստանձնած էր երգչախումբին նուագակցելու դժուարին պարտականութիւնը, հանդիսութեան երկրորդ կեսին իր հակիրճ, բայց բովանդակալից խօսքով ներկայացուց իր գիտական տեսակետը՝ Խաչատրեանի երաժշտական ժառանգութեան նկատմամբ արեւմուտքի կարգ մը քննադատներու միակողմանի կարծիքներուն մասին:

Մեր կարծիքով, այս «խօսք»-ը ունի մնայուն արժէք եւ կարելոր է որ մօտակայ օր մը լոյս տեսնէ որեւէ ձեւով:

Վերադառնալով «Արաքս» երգչախումբ-





բին, որուն հիմնադրութեան տասնամեակը կը լրանայ ներկայ տարուան Նոյեմբերին, պէտք է նշել որ անոր կատարողական մակարդակը տարուէ-տարի յառաջդիմութիւն մը ունենալով՝ այսօր բաւական ընդունելի մակարդակի մը հասած է (անշուշտ որպէս համայնքային երգչախումբ մը):

Եգիպտահայ համայնքը այս նուաճումը կը պարտի երգչախումբի հիմնադիր ու գեղարւեստական ղեկավար, խմբավար ու երաժշտագետ Միհրան Ղազէլեանին, որ ժրաջան մեղուի մը նման յարատեւ աշխատանքէ չի յոգնիր, նաեւ գիտէ ինչպէս կազմակերպել իր ժամանակն ու կենսական ուժերը:

Մեր մաեսթրօն պատրաստած էր նաեւ բաւական հարուստ յայտագիր-գրքոյկ մը, որ կը ներառէր խաչատրեանական երաժշտութեան յարմարեցուած կարգ մը երգերու խօսքերը՝ յօրինուած իր կողմէ:



Այս յայտագիր-գրքոյկին համակարգչային ձեւաւորողն է Շահէ Լուսարարեան, իսկ տպագրողը «Նուպար» տպագրատունը:

Պիտի ուզէիք նաեւ յիշել դերը Գարոյին Արսլանեանի՝ որպէս բեմայարդար, ինչպէս նաեւ Օհան Ճանիկեանի՝ բեմաձայնային սարքաւորումներու պատասխանատու:

Յաջողութիւն կը մաղթենք «Արաքս» երգչախումբին եւ անոր գեղարուեստական ղեկավար, խմբավար Միհրան Ղազէլեանին, իրենց գալիք համերգներու իրականացումին մէջ:

*Յրանդ Բէշիշեան*





## «ԶԱՆԳԵՂՈՒՐ» ՊԱՐԱԽՈՒՄԲԻՆ ԵԼՈՅԹԸ

«Գեղեցկագիտություն» բառը, որ 1750-ին «Էսթեթիք» ձևին տակ արուեստի մեջ ներմուծած է գերմանացի հռչակալոր իմաստասեր Ալեքսանդր Կոթլիպ Պաուկարթըն, կը սերի յունարէն «էսթիսիս» բառէն, որ թարգմանաբար կը նշանակէ «զգայարանական հասողություն»: Յետագային սակայն, այն ձեռք կը բերէ «գեղեցկագիտութեան ըմբռնողություն» կամ «գեղարուեստներու տեսություն» իմաստը:

Պարը, որ համաշխարհային գեղարուեստի վեց դասաւորումներուն\* մէջ իր հաստատուն տեղը գրաւած է 13-րդ դարուն միայն եւ մինչեւ այսօր կը մնայ՝ իբրեւ գեղագիտական արուեստ մը, հայ ժողովուրդի մօտ սկիզբ առած է հեթանոսութեան շրջանէն՝ ներկայացնելով բնապաշտութեան, ծիսական արարողութիւններու, ռազմադաշտերու, ողբերու, խրախճանքներու եւ ազգային տօնախմբութիւններու տեսարաններ:

Դարեր շարունակ յարատեւելով եւ աւելի կատարելագործուելով, հայկական պարերը իրենց մէջ ներառած են հայ ժողովուրդի կենցաղը, բնաւորութիւնը, դժուարին ու մաքառումներով լեցուն պատմութիւնը, կենսախիւն ու հաճելի հիւմըրը՝ յագեցած գեղագիտական բարձր որակներով:

Ինչպէս Հայաստանի՝ այնպէս ալ Մեծ Եղեռնէն փրկուած աշխարհասփիւռ բեկորներուն մէջ, ազգային մշակոյթի տարբեր տեսակներուն քով, իր մնայուն տեղը ապահոված է հայկական պարը՝ իբրեւ հայապահպանման ազդակներէն մին: Այն, ինչ ունեցած է ժողովուրդը, երբեք չէ՛ կորսնցուցած. պարը հայուն երկրորդ գէնքն է, պարով ան կռուած ու յաղթած է:

Ըսուածը վաւերացնելու կու գայ եգիպտահայոց «Չանգեգուր» պարախումբին երկարամեայ գոյութիւնը, որ իր գործունեութիւնը սկսած է 1971-ին եւ սերնդափոխութենէ վերջ ալ (երբեմն որոշ դադարներ ունենալով), ցարդ կը շարունակէ իր ուղին:

Սիրուած այս պարախումբին ելոյթը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 11 Ապրիլ 2013-ի երեկոյեան ժամը 8-ին, «Կում-հուրէյա» սրահին մէջ, հովանաւորութեամբ Եգիպտահայոց Թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպսկ. Մաքականեանի, նախագահութեամբ Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ատենապետ Տէր եւ Տիկ. Ժիրայր Տեփոյեանի եւ կազմակերպութեամբ ՀԱՀ Կոկանեան Սրահի ու Հայ Գեղարուեստասիրաց Միութեան:

Բացման խօսքով ելոյթ ունեցող տիկիններ Լալա Նիկոլեան (հայերէն) եւ Մարլին Աւանեան (անգլերէն եւ արաբերէն) անգամ մը եւս շեշտադրեցին ազգային պարի կարեւորութիւնը մեր մշակոյթին եւ կեանքին մէջ:

Պարախումբին գեղարուեստական ղեկավար Սիւզան Յակոբեան-Գարգուր, որ եօթը տարեկանէն իր մասնակցութիւնը բերած է «Չանգեգուր»-ին՝ պարուսոյց ունենալով պարախումբի առաջին ղեկավար Լեոնորա Գրիգորեանը, 2008-էն սկսեալ ինք արդէն ղեկավարած է Նոյն մանկապատանեկան պարախումբը՝ որպէս պարուսոյց:

«Պարողի ոտքերը պետք չէ՛ յոգնին», - ըսած է ՀՍՄԸ Ժողովրդական Արտիստ, Պետական Մրցանակի Դափնեկիր՝ Թաթուլ Ալթունեան:

Եւ ահա, ամիսներ շարունակ տքնաջան եւ համբերատար աշխատանք տանելով, Սիւզան Յակոբեան-Գարգուր ելոյ-

\*Համաշխարհային գեղարուեստի վեց դասաւորումներուն մաս կը կազմեն՝ ճարտարապետութիւնը, արձանագործութիւնը, նկարչութիւնը, երաժշտութիւնը, բանաստեղծութիւնը եւ պարը:





թի պատրաստած էր պարախումբը՝ օգնական ունենալով պարախումբի պարողներին Վարդան Թերզիպաշեանը:

Անաչառ ըլլալու համար, պետք է խոստովանիք որ պարախումբը հեռու է կատարեալ եւ անթերի ըլլալէ: Չգալի է որ խումբը բարձր մասնագիտական յատկանիշներ ունեցող պարախումբ մը չէ, սակայն պարուսոյցին սկզբունքը մէկ է՝ մօտեցնել մանուկները եւ պատանիները հարազատ ազգայինին: Ան կրցածին չափ փորձած է բարձրացնել պարերու կատարողական վարպետութիւնը՝ ճկունութիւնն ու արտայայտչականութիւնը, սահունութիւնն ու սրբութիւնը:

Ելոյթը սկսելով «Չանգեզուրի Տոհանք»-ով, յաջորդաբար կատարուեցան տասնետօթը պարեր, որոնցմէ շատերը հայկական՝ ներկայացուած գեղեցիկ ազգային տարազներով, իրենց վրայ կրելով հայ ազգային մանրանկարչութեան բնորոշ երանգները: Ատոնք էին՝ «Լեռնցիներ», «Տօնական», «Քոչարի», «Իլիկներու Պար», «Վաղարշապատ», «Լեզկիներ», «Արցախ», «Ուզունտարա», «Իմ Նազանի», «Ազգագրական Պար», «Աւարայր», «Քաջն Նազար» եւ «Փակման Պար», կային նաեւ «Let's Kiss», «Յնդկական Պար» եւ «Tarantella» պարերը: Ասոնցմէ իւրաքանչիւրը իր գե-

ղեցկութիւնն ու հետաքրքրութիւնը ունէր, որոնք կը ներկայացնէին հայ ժողովուրդին ռազմաշունչ, կուռ ու անառիկ միասնութիւնը, անսասանութեան ոգին, հայ ամօթխած գեղջկուհիին կերպարը, թիֆլիսեան կեանքի ու կենցաղի պատկերը, ազգային հիւմորն ու այլ տեսարաններ:

Յուզիչ էր մանաւանդ «Աւարայր»-ի ժամանակ փոքրիկ տղոց կազմած բերդը: Իրենց դողդոջուն ոտքերով եւ ո՛չ այնքան վարպետ կատարումով հանդերձ, կարծէք մէկ բան կ'ուզէին յիշեցնել. «Մենք մեր նախնիքին արժանաւոր սերունդն ենք եւ մի՛շտ անառիկ բերդ պիտի ըլլանք՝ մեր ազգին հանդէպ որեւէ ոտնձգութեան դէմ»:

Պարողներուն ելոյթը իր գեղեցկագիտական արժէքը դրսեւորեց հանդիսատեսին փոխանցուած յուզական հաճոյքով, որը ըմբռնելով գեղեցիկը՝ իր գնահատանքը արտայայտեց բուռն ծափերով:

Կը շնորհաւորենք շնորհալի պարուսոյցն ու բոլոր մասնակիցները, կը մաղթենք սոր եւ յաջորդական ելոյթներ:

Վարձքը կատար բոլոր կազմակերպիչներուն եւ օգնականներուն:

*Շաքէ Մարգարեան*







## ԳԱՀԻՐԷԻ ՀԲԸՄ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ



Գահիրեի ՀԲԸՄ-ը իր տարեկան ընդհանուր ժողովը գումարեց Երեքշաբթի, 30 Ապրիլ 2013-ին, Յելիոպոլսոյ «Չագըր Մշակութային Կեդրոն»-ին մէջ, ներկայացնելու եւ վաւերացնելու համար 2012 տարեշրջանի իր նիւթական եւ բարոյական գործունեութեան տեղեկագրերը, ինչպէս նաեւ ընդհանուր ժողովին հաւանութիւնը առնելու՝ 2013-ի պիւտճէի նախատեսութեան:

Գահիրեի ՀԲԸՄ-ի վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Վիգէն Ճիգմէճեանի բարի գալուստի խօսքէն ետք, վարչութեան ատենադպիր՝ Տիար Մարտիկ Պալայեան կարգաց նախորդ ընդհանուր ժողովի նիստին ատենագրութիւնը, ինչպէս նաեւ Գահիրեի ՀԲԸՄ-ի 2012-ի գործունեութեան տեղեկագիրը:

Սոյն ներկայացման ընդմէջէն ի յայտ կու գար թէ 2012-ի ընթացքին, Գահիրեի ՀԲԸՄ-ը իր ծրագիրներուն իրագործումին համար Չագըր հիմնադրամէն ծախսած է 1,691,014 Ե.Ո. հետեւեալ գլխաւոր նպատակներուն համար:

371,470 Ե.Ո. ծախսուած է մշակութային ծրագրերու եւ ձեռնարկներու, ինչպէս «Արեգ» արաբերէն պարբերականին, «Տեղեկատու» պաշտօնաթերթին, «Ծիածան» մանկական երգչախումբին, գիրքերու հրատարակութեան, «Չագըր» մշակութային կեդրոնին մէջ տեղի ունեցած ձեռնարկներու եւ ֆիլմերու ցուցադրութիւններու, Միութեան Եգիպտոսի կայքէջին եւայլն....: Վերոյիշեալ գումարը կը պարփակէ նաեւ ուսումնասիրական ծրագրերու պատուագիրները եւ թոշակները, ինչպէս նաեւ «Յա-

յաստան եւ Յայերը Եգիպտական Մամուլին Մէջ» ընթացող հրատարակչական ծաւալուն ծրագրին եւ վերջապէս այն մասնաւոր յատկացումները, որոնք կը տրուին հայութեան ի նպաստ պրպատումներ եւ ուսումնասիրութիւններ կատարող մասնագետներու, որոնք այժմ հիւնգ հոգի են, ներառեալ Տոքթ. Սոհամետ Ռիֆաաթ Էլ Իմամը:

2012-ին, 356,429 Ե.Ո. ծախսուած է 63 կարիքաւոր անհատներու ընկերային օժանդակութեան եւ դարմանումի համար:

159,945 Ե.Ո.՝ որպէս կրթական օժանդակութիւն 25 ուսանողներու: 13,500՝ հանգըստեան կոչուած հայերէնի ուսուցիչներու, 30,000 Ե.Ո.՝ Գահիրեի Համալսարանի Հայագիտական Կեդրոնին եւ 376,299 Ե.Ո.՝ որպէս նիւթական օժանդակութիւն զանազան հայկական կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու:

2012-ի ընթացքին, առողջապահական խնամքի ծրագրէն (Medicare) օգտուած են 299 հայրենակիցներ, որոնց համար ծախսուած է 379,094 Ե.Ո.:

Վերջաւորութեան, Գահիրեի ՀԲԸՄ-ի ատենապետը ներկայացուց 2013-ի նախահաշիւ պիւտճէն, որ վաւերացուեցաւ ընդհանուր ժողովին կողմէ:

Յաջորդ շրջանին համար, ՀԲԸՄ-ի Գահիրեի Վարչութեան կազմը մնաց անփոփոխ:

Ընդհանուր ժողովի ակարտին, ներկաներուն ի պատիւ, տեղի ունեցաւ թեթեւ հիւրասիրութիւն մը

*ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝  
Անայիս Ճիգմէճեան :*



## **ՀԲԸՄ-Ի ՆՈՐ ՄԱՍՆԱԾԻՒՂ ՈՒՔՐԱՆԻՈՅ ՄԷՋ**

ՀԲԸՄ-ի նիւ եորքեան գլխաւոր գրասենեակէն ստացուած մամլոյ հաղորդագրութիւնը կը տեղեկացնէ որ Փետրուար 22-24, ՀԲԸՄ-ի յատուկ պատուիրակութիւն մը Ուքրանիա այցելած է՝ քաղաքական եւ համայնքային առաջնորդներու հետ, այդ երկրին մէջ նոր մասնաճիւղ մը բանալու ծրագիրը քննարկելու համար: 300-500 հազար հոգիէ բաղկացող Ուքրանիոյ հայկական համայնքը Եվրոպայի ամենահին համայնքներէն մէկն է:

Ուքրանիոյ խորհրդարանի անդամ Արսէն Աւագով եւ անոր խորհրդադատու Տիգրան Աւագեան ընկերակցած են պատուիրակութեան, որուն մաս կազմած են ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներ Վազգէն Եագուպեան եւ Երուանդ Չօրեան, ՀԲԸՄ-ի Եվրոպայի Վարչութեան անդամ Նիքոլաս Դաւիթեան, եւ ՀԲԸՄ-ի Մարտավարական Խորհրդատու Մարմնի անդամ Գայ Մարգարեան: Անոնք միասին հանդիպումներ ունեցած են խորհրդարանի խօսնակ Վլատիմիր Ռիպակի, խորհրդարանի անդամներ Միտր Մխիթարեանի եւ Վիլէն Շատուրեանի, ինչպէս նաեւ խորհրդարանի շարք մը յանձնախումբերու ղեկավարներուն հետ: Առաջին օրուան վերջաւորութեան պատուիրակութեան միացած է նաեւ ՀԲԸՄ-ի Եվրոպայի Վարչութեան անդամ Գօռ Աբգարեանը:

Փետրուար 23-ին, Օստեսայի մէջ ՀՀ գլխաւոր հիւպատոս Գեորգի Մուրատեանին, Գրիգորիս արքեպիսկոպոս Պունիաթեանին եւ համայնքին ղեկավար Սամուէլ Տիգրանեանին հետ հանդիպումներէ յետոյ, պատուիրակութեան անդամները յարգանքի տուրք մատուցած են Բ. Աշխարհամարտի հերոս, մարաջախտ Համազասպ Բաբաճանեանի յուշարձանին մօտ, ապա մերձակայքը գտնուող մշակոյթի կեդրոնին մէջ, իրենց ի պատիւ տրուած գեղարուեստական ծրագիրը վայելած են:

Նոր մասնաճիւղի բացման առընթեր, աշխուժանալու է տեղի հայկական համայնքին կեանքը: Կը նախատեսուի ստեղծել ՀԲԸՄ երիտասարդ արհեստավարժներու խումբեր, Վիրթուալ Համալսարանի աշխատանոցներ եւ իրականացնել փոխայցելութիւններ՝ «Բացայայտի՛ր Հայաստանը», «Ամառնային Ուսանողական Փորձառութիւն», «Անդրանիկ» սկաուտական բանակումներու եւ «Երաժշտական Հայաստան» ծրագրերու շրջանակներէն ներս:

*Յ. Ծուլիկեան*

*Արեւմտահայերէնի վերածեց՝ Շ. Ս.*



## ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ ՀՄԸՄ ԿՈՒՊԱՐԷՆ ԿԵՐՍ ՏՈՔԹ. ԱՆԻ ՕՀԱՆՆԵՍԵՏԱՆԻ ԳՆԱԿԱՍՈՍՈՒԹԻՒՆԸ



Ուրբաթ, 1 Մարտ 2013-ին, Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ԿՈՒՊԱՐԻ Տիկնանց Յանձնախումբի Լախաձեռնութեամբ դասախօսութիւն մը կազմակերպուած էր ակումբին անդամներուն եւ համակիրներուն համար: Օրուան դասախօսուիին էր Տոքթ. Անի Օհաննեսեան, որ Ներքին Հիւանդութիւններու եւ Առողջարար Սննդականոնի մասնագետ բժիշկ մըն է:

«Ի՞նչ ուտել առողջ եւ բարեձեւ մարմին ունենալու համար». նիւթ մըն է որ կը հետաքրքրէ ամէն տարիքի տիկիները եւ օրիորդները:

Բացման խօսքով հանդես եկաւ վարչականուիի Տիկին Նայիրի Սիմոնեան եւ հրաւիրեց Տոքթ. Անին: \*

Յարգելի դասախօսուիին պարզ ու յստակ ձեւով ներկայացուց իր նիւթը, որ կը մտահոգէ շատերու: «Պուն ան ես, ինչ որ կ'ուտես» իրողութեան վրայ հիմնուելով շեշտեց որ շատ կարեւոր է գիտնալ թէ ի՞նչ կ'ուտենք:

«Պէտք է որ կարենանք գատորոշել մեր կերածները», - ըսաւ ան: Այս գիտակցութիւնը բնագոյ մըն էր մարդ արարածին մէջ, զոր դժբախտաբար կորսնցուցած է դարերու ընթացքին:

35 օրը անգամ մը մեր մորթը կ'ինքնանորոգուի՝ նոր բջիջներ կազմելով մեր կերածներէն: Ուրեմն բառացիօրէն, «մենք կ'ըլլանք այն, ինչ որ կ'ուտենք»:

Տոքթ. Անին բացատրեց որ նոյն սննդականոնը չի կրնար ազդեցիկ ըլլալ տարբեր անձերու համար: Մասնագետ բժիշկին դերն է անձը ուսումնասիրելը ամէն կողմերէ. օրինակ՝ ապրելակերպը, սովորութիւնները, Լախասիրութիւնները, առողջական վիճակը, տարիքը եւայլն ու ըստ այնմ յատուկ սննդականոն մը պատրաստել:

«Նիհարնալու գուգահեռ ճիշդ սննդականոնը առողջութեան ալ կը նպաստէ», - ըսաւ ան: Տրուած ըլլալով որ ոչ առողջարար ուտելիքներն ու խմիչքները այնքան դիւրամատչելի եւ համեղ եղած են որ շատ դժուար է հրաժարիլ անոնցմէ: Տոքթ. Անի տասը կէտերու մէջ ամփոփեց նիհարնալու եւ առողջ ապրելու իր մօտեցումը:

Դասախօսութեան աւարտին ներկաներէն շատեր իրենց մտահոգող նիւթերու մասին հարցեր տուին, որոնց դասախօսը ամենայն համբերութեամբ պատասխանեց:

Շուտով բացուեցաւ Տիկնանց Յանձնախումբին կողմէ պատրաստուած առողջարար աղցաններով լի ազատ շքասեղանը:

Նորանոր յաջողութիւններ կը մաղթենք Տոքթ. Անի Օհաննեսեանին՝ իր ասպարեզին մէջ եւ վարձքը կատար ակումբին տիկիներուն:

*Սօսի Ներտտեան-Յակոբեան*

\* Տոքթ. Անի Օհաննեսեան շրջանաւարտ է Նուպարեան Ազգային Վարժարանէն 2001-ին, գերագանց յիշատակութեամբ:

Յաճախած է Այն Շամս Համալսարանի բժշկական բաժինը եւ աւարտած՝ 2007-ին: Ան 2012-ին պաշտպանած է իր մագիստրականը «Ներքին Հիւանդութիւններու» մասին: Նոյն տարին Գահիրէի Համալսարանէն «Առողջարար Սննդականոն»ի (Clinical Nutrition) վկայական ստացած է:





## ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 13 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ ՏՂՈՑ ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԱՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ «ՔԱՕԿ»Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՄՐՑԱՇԱՐ-ՔԻՆ

Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 13 տարեկանէն վար տղոց խումբը, 20 Յունուարէն 14 Փետրուար 2013, մասնակցեցաւ յունական «ՔԱՕԿ» մարզական ակումբի կազմակերպած ֆութպոլի մրցաշարքին եւ գրաւեց 4-րդ դիրքը: Սոյն մրցաշարքին մասնակցած են հետեւեալ խումբերը. Ս. Թերեզայի Ա,Բ,Գ եւ Դ խումբերը, «Ard-El-Golf»ի Ա եւ Բ խումբերը, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԸ եւ հիւրընկալող «ՔԱՕԿ»ը:

Առաջին մրցումը տեղի ունեցաւ Կիրակի, 20 Յունուար 2013-ին, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Ս. Թերեզայի Բ խումբին միջեւ, որ աւարտեցաւ հաւասարութեամբ: Սակայն 24 Յունուարին, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը փառաւոր յաղթանակ մը տարաւ, 6-0 արդիւնքով յաղթելով «Ard-El-Golf»ի Բ խումբին, որուն յաջորդեց Կիրակի, 27 Յունուարին յաղթանակը՝ ընդդէմ Ս. Թերեզայի Գ խումբի՝ 9-2 արդիւնքով:

Այս, դժբախտաբար, խումբը պարտուեցաւ «Ard-El-Golf»ի Ա խումբէն՝ 3-4, ինչպէս նաեւ Ս. Թերեզայի Ա խումբէն՝ 4-5 արդիւնքով:



Յիշենք որ «ՔԱՕԿ»ի կազմակերպած 2012-ի մրցաշարքին, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը 3-րդ հանդիսացած էր:

ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիչն է Տորրի Ապտէլ Սալամ, իսկ պատասխանատուն՝ Ռուբէն Սիմոնեան:

*ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝  
Անայիս Ժիգմեճեան*

## ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՐԿԽՕՍՍՈՒԹԻՒՆ - 500 ՏԱՐԻ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՔԵՐՈՒՄ

*շարունակութիւն էջ 13-էն*

ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Ինստիտուտի տնօրէն Ռուբէն Սաֆրաստեան - Հայ Ազատականները եւ Սահմանադրական Շարժումը Օսմանեան Կայսրութիւնում (19-րդ դարի 60-70-ական թթ):

ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի փոխտնօրէն Կարէն Խաչատրեան, որ կը ներկայացնէր ուսումնասիրութիւնը նոյն ինստիտուտի տնօրէն Աշոտ Մելքոնեանի (որ վերջին պահուն չէր կրցած անձամբ ներկայ գտնուիլ) - Արեւմտեան Հայաստանը Արեւելք - Արեւմուտք Առեւտրական Յարաբերութիւններու Ոլորտում:

ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Ինստիտուտի աւագ գիտաշխատող Ռոբերտ Ղազարեան - Հայկական Լեռնաշխարհի եւ Փոքր Ասիայի Երկրների Քաղաքական Ու Մշակութային Փոխյարաբերութիւնները Բ.Ա. 14-13-րդ ԴԴ:

Եգիպտահայ Կաթողիկէ համայնքի Վիճակաւոր Գերապայծառ Գրիգոր Օգոստինոս Գուսան - Միսիթարեան Հայրերու Դերը Հայ Մշակոյթին Մէջ:

Տոքթ. Սուրէն Պայրամեան - Հայ Տպագրութիւնը Եգիպտոսի Մէջ:



## ՄԱՅ-Թ ՆԱԳԻԼ ԱՄՈՅԵԱՆ՝ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 2013-Ի ԳՆԳԱՄՈՒՂԻ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ



Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ կազմակերպած գնդամուղի տարեկան, աւանդական մրցաշարքին եզրափակիչ մրցումը տեղի ունեցաւ Կիրակի, 10 Մարտ 2013-ին, որուն աւարտին վճռական յաղթանակը տարաւ Մայք Նապիլ, 4-0 արդիւնքով պարտութեան մատնելով իր փորձառու եւ հմուտ մրցակիցը՝ Նուպար Գոլյումճեանը:

Մրցաշարքին զանազան փուլերուն ընթացքին, ոչ մէկ պարտութիւն կրեց Մայք: Ան ցուցաբերեց վարժ, ինքնավստահ խաղարկութիւն մը եւ մինչեւ աւարտական իր ուղին հարթեց յաջորդաբար պարտութեան մատնելով Հրաչ Սվաճիպաշեանը, Վիգէն Ճիգմէճեանը, Սիմոն Տեփոյեանը եւ Վահէ Վարժապետեանը՝ բոլորն ալ 3-0 արդիւնքով:

Մրցաշարքի ախոյեանութեան ցանկին վրայ, Արմէն Վարժապետեան արձանագրած է 5 յաղթանակ, Գեորգ Սագայեան՝ 4, Յակոբ Գալէշեան՝ 3, իսկ Մայք Նապիլ պատուով արձանագրեց իր առաջին յաղթանակը:

Մրցաշարքին բաժակը նուիրած էին Տէր եւ Տիկին Լեւոն Գաղթասցեան:

*ՀՄԸՄ-ի կայքէջէն քաղեց՝  
Անայիս Ճիգմէճեան*





## T-TAPP ՀԵԼԻՌՊՈԼՍՈՅ ՀՄԸՄ ԿՈՒՊԱՐԷՆ ՆԵՐՍ



Չորեքշաբթի, 6 Մարտ 2013-Էն սկսեալ եւ ամէն Չորեքշաբթի առաւօտեան 10-11, Դե-լիոպոլսոյ ԴՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ դալար մարզա-գետնին վրայ սկսուած T-Tapp մարզանքի պահերը բաւական ժողովրդականութիւն կը վայելեն ակումբին տիկիններուն մօտ:

Միայն իգական սեռին համար նախա-տեսուած այս անձանօթ մարզածելը շատե-րու հետաքրքրութիւնը շարժեց ու աստի-ճանաբար գնահատանքի արժանացաւ: Teresa Tapp ամերիկացի մարմնամարզի բնա-խօս (exercise physiologist) եւ սննդականո-նի խորհրդատու մըն է: Ան իր 24 տարինե-րու փորձառութեան վրայ հիմնուելով, մէջ-տեղ բերած է այս նոր մարզածելը, որ շատ օգտակար է 30 տարեկանէն վեր տիկիննե-րու եւ օրիորդներու:

T-Tappը մէկ ժամ տեսողութեամբ շար-ժումներու շարք մըն է, որ ծրագրուած է մարմինը, աւելի ճշգրիտ ըլլալու համար ող-նայարը, գործօն դասաւորման (functional alignment) մէջ դնել եւ վերականգնել փո-խարկումի գործողութիւնը (restore meta- bolic): Ան մարմնին բոլոր մկանները կ'աշ-խատցնէ ներդաշնակօրէն, մեծապարփակ եւ բաղադրեալ շարժումներով արագ կեր-պարանափոխում տեղի կ'ունենայ՝ առանց ճնշում բանեցնելու մէջքին եւ ծունկերուն վրայ:

T-Tappը պարզապէս ջերմութ եւ իւղ այ-րելէ աւելի, բառացիօրէն կը կանոնաւորէ եւ կը վերականգնէ մարմնին տարրական

գործարանները՝ ինչպէս աւշային դրութիւ-նը (lymphatic system), ներքնահոս դրութիւ-նը (endocrine system), փոխարկումի արա-գութիւնը (metabolic rate) եւ արտաքսումի դրութիւնը (elimination system):

Հակառակ որ շարժումները շատ պարզ ու հեշտ կ'երեւին, սակայն անոնք կը կոփեն մարմինը աւելի արագ, քան ուրիշ շատ մը աւելի բուռն մարզածելեր: T-Tappը մկան մը առանձին չ'աշխատցնէր բնաւ, այլ այնպէս մը ծրագրուած է որ յոգնեցնէ խումբ մը մկաններ՝ խաւ առ խաւ, առանց որեւէ գոր-ծիքի:

Ձերբազատուելով գոց սրահներու մէջ աշխատելէ, ակումբին տիկինները, մասնա-գետ մարզիչ Joyceի հսկողութեան տակ, առաւօտեան մաքուր օդն ու զեփիւռը վայե-լելով, իրաքանչիւրը ըստ իր կարողութեան եւ ճկունութեան, կը մարզուի:

T-Tappի առաւելութիւններէն է նաեւ որ որեւէ անձ կրնայ միանալ խումբին՝ որեւէ ժամանակ: Անշուշտ յարատեւութիւնը կը վարձատրուի՝ սպասուած արդիւնքը ստա-նալով մարմնին եւ առողջութեան վրայ:

Կը մաղթենք որ այս շարժումը շարունակուի եւ միշտ նոր մարզիկուհիներ գան միանա-լու հիներուն:

Ժամանակացոյցին կամ յաւելեալ տեղե-կութեան համար կարելի է դիմել Տոքթ. Դերմինէ Վարժապետեանի եւ Տիկին Սօսի Յակոբեանի:

*Սօսի Ներենտեան-Յակոբեան*



## ՈՉ ԵՒՍ Է ԱՐՍԷՆ ԷՄԻՐՋԵԱՆ



Կիրակի, 24 Մարտ 2013-ին, Օրլանտոյի (ԱՄՆ) մէջ, ուր գացած էր դարմանուելու, իր մահկանացուն կնքեց Գահիրէի համայնքին ծանօթ ազգայիններէն Արսէն Էմիրճեան:

Ողբացեալը երկար տարիներ նուիրեալ, պարտաճանաչ եւ անբասիր հասարակական գործունեութիւն ունեցած է:

Ան եղած է Նուպարեան Ազգային Վարժարանի Յոգաբարձութեան ատենապետ, անդամակցած է Գահիրէի Ազգային Առաջնորդարանի Կալուածոց Յոգաբարձութեան, ապա եղած՝ անոր ատենապետը, ինչպէս նաեւ երկար տարիներ անդամակցած է Գահիրէի ԶԲԸՄ-ի Առողջապահական Խնամատարութեան Յանձնախումբին:

Ան իր վարած բոլոր հասարակական պաշտօններուն մէջ վայելած է իր գործակիցներուն սերը, յարգանքը եւ գնահատանքը:

Հանգուցեալին յուղարկաւորութեան տխուր արարողութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 2 Ապրիլ 2013-ին, Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ, նախագահութեամբ թեմիս Բարեխնամ Առաջնորդ Սրբազան Զօր, որ այս առիթով խօսեցաւ յաւուր պատշաճի դամբանական մը՝ վեր առնելով հանգուցեալին բարեմասնութիւնները:

Իր յարգանքի վերջին տուրքը մատուցելու համար եկեղեցի փութացած էր հոծ բազմութիւն մը, որուն մաս կը կազմէին Ազգային Իշխանութեան անդամներ, հայ եւ օտար գործակիցներ եւ եգիպտահայ համայնքի բազմաթիւ զաւակներ:

Յարգանք եւ խունկ ողբացեալին բարի յիշատակին:

***Սեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալին զաւակին՝ Տիար Ալէն Էմիրճեանի, եղբայրներուն եւ քոյրերուն ու սգակիր բոլոր պարագաներուն:***

